Հասկանալի չէ, վոր Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների զրուկներն այսպիսի պայմաններում բողոքովին անտանելի չէր: Անվերջ կռիվները զրկում էին յերկիրն աշխատող ձեռնակում: Գյուղացին մոռացել էր վար ու ցանքսի մասին: Բազմաքաներում և գյուղերում թափվել էին տասնյակ հազարավոր գաղթականներ: Հայաստանը դարձել էր վորբերի, քաղցի, սովի, վարակիչ հիվանդությունների յերկիր: Միայն մի խումբ արտոնյալ պաշտոնյաները, սպեկուլյանտները, խմբապետներն ու՝ մաուզերիստները ժողովրդին անխնա թալանելով, իրենց համար բարեկեցիկ և փարթամ կյանք էին ստեղծել:

Ժողովրդական վողջ տնտեսությունը, թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը ծայր աստիճան քայքայվեցին, այնպես վոր նույն իսկ դժվար է թվական ավաններով ցույց տալ այդ քայքայման չափը, քանի վոր մի շարք ասպարեզներում քայքայումը կատարվել էր հիմնահատակ: Դաշնակիների տիրապետության որով վող մի շինարարություն չկատարվեց Հայաստանում:

### ՄԱՅԻՍԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Բնական է, վոր Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն այդպիսի դրություն յերկար տանել չէին կարող: Դաշնակիների իշխանությունն ատելի չէր բոլոր աշխատավորների համար: Բոլորը մտածում էին մի յիլք գտնել՝ ազատվելու այդ ատելի իշխանությունից:

Յեղը միայն մեկն էր՝ ապստամբել մաուզերիստական կուսակցության դեմ և հաստատել բանվորների ու գյուղացիների խորհրդային իշխանություն, ձեռք մեկնել հեղափոխական Ռուսաստանին և ընդհանուր Ֆրոնտ կազմել իմպերիալիզմի դեմ: Այսպիսի յիլք էին ցույց տալիս բանվորներին և գյուղացիներին Հայաստանի դեռ այն ժամանակ:

նակ սակավաթիվ բողոքիկները: Հասկանալի չէ, վոր Հայաստանի բողոքիկները կատարի հալածանքի էյին յենթարկվում դաշնակցական կառավարության կողմից: Նրանց բանտարկում, աքսորում, գնդակահարում էին: Սակայն հալածանքի միջոցով հեղափոխությունն առաջնաունելի կարելի: Բողոքիկների ապիտացիան ժողովրդի սրտին երբ ըլիում: Յերկիրը գնում էր արագ քայլերով դեպի պրոլետարական հեղափոխությունը:

Հայաստանի բանվորների և գյուղացիների առաջին մեծ ապստամբությունը բռնկվեց 1920 թվի մայիս ամսին: Ապստամբեցին Ալեքսանդրապոլի (ներկայիս Լենինականի) բանվորները և մայիսի 10-ին իշխանությունն իրենց ձեռքը վերցրին: Բանակը միացավ ապստամբներին: Ապստամբությունը տարածվեց Կարսում, Սարիղամիշում, Նոր-Բայազետում, Դաղարում, Իզդիրում և այլն: Յերևանի աշխատավորությունը մայիսի 1-ի իր հսկա ցույցերով ցույց տվեց իր պատրաստակամությունը դաշնակիների իշխանությունը տապալելու համար: Դաշնակիները սկզբում կորցրին իրենց զուլքը, սակայն նկատելով, վոր ապստամբությունը ղեկավարելու, գլխավորելու և հաղթական վախճանի հասցնելու համար դեռ թույլ է յերկրում կոմունիստական կուսակցությունը, սիրտ առան հավաքելով մաուզերիստական խմբերին, Դենիկինյան սպաներին և գեներալներին, կուսակիներին և սպեկուլյանտներին, նրանց հաջողվեց ժամանակավորապես արյան մեջ խեղդել բանվորա-գյուղացիական ապստամբությունը: Բանտերը լըցվեցին ապստամբների լավագույն ղեկավարներով, նրանցից շատերը դո՛ գնացին սպիտակ տերրորին և մաուզերիստական վրեժխորություն: Մայիսյան ապստամբությունը պարտվեց այն պատճառով, վոր չկար ապստամբությունը ղեկավարող մի ընդհանուր կենտրոն, դեռ թույլ էին պրոլետարիատի կուսակցության-կոմունիստների կազմակերպությունները տեղերում: Իսկ ընդհանուր ճշմարտությունն է, վոր առանց պրոլետարիատի կուսակցության ամբակուռ ղեկավարության, պրոլետարական հեղափոխությունը հաղթանակել չի կարող:

### ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՇԵՂՈՒՄԻՍՏՈՒՆ

Սակայն մայիսյան ապստամբության պարտությունը չփրկեց դաշնակիներին վերջնական կործանումից: Դաշնակիներն սկսեցին ել ավելի ստատկացնել իրենց տերրորը: Համախմբելով իրենց շուրջը յերկրի բոլոր հակահեղափոխական տարրերին, դաշնակիներն սկսեցին նոր պատերազմ տաճիկների դեմ: Ժողովրդական մասսաների թշվառությունը ծայր աստիճանի հասավ: տաճիկական բանակներն սկսեցին ասալ շարվել դեպի յերկրի ներքին գավառները: Դաշնակցական բանակը, վորը վող թե ուղղակի գիտության և տեխնիկայի հիմունքներով կազմավորված էր:

մակերայված բանակ էր, այլ ոնգրագետ խմբապետների ձեռքին խաղալիք դարձած խուժան, սկսեց ճանճի պես նահանջել առանց կովի նորից գաղթականների քարավաններ, նորից վորբեր, նորից սով ու կոտորած, նորից անմշակ և խոպան դաշտեր:

Հարևան Ադրբեջանում՝ Բազմի պրոլետարիատի ապստամբութեամբ և հաղթական կարմիր բանակի ոժանդակութեամբ արդեն հաստատված էր խորհրդային իշխանութիւնը: Հայաստանի բանվորները և գյուղացիները հայացքն ուղղված էր դեպի կարմիր Ադրբեջան: Յեկիսկապես, նոյեմբեր ամսին Ղազախի հեղափոխական գյուղացիութիւնը նորից ապստամբութեան դրոշմ է բարձրացնում: Դաշնակներն շտապում են ամօթալի հաշտութիւն կնքել տաճիկների հետ, առյուծ նրանց կարսը, Արդահանը, Սարիղամիշը և Իգդիրը, վորպեսզի ճնշեն Ղազախի գյուղացիութեան ապստամբութիւնը: Սակայն կարմիր բանակը ոգնութեան է հասնում ապստամբներին, գաշնակցական խմբերը պարտվում են: 1920 թվի Յոյեմբերի 29-ին Հայաստանում հայտատարվում է խորհրդային իշխանութիւնը:

### ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՆԱԿԱՇԵՂԱՓՈՒՈՒՅՅՈՒՆ

Յերիտասարդ խորհրդային իշխանութիւնը շատ ծանր ժառանգութիւն ստացավ գաշնակցական կառավարութիւնից: Ժողովրդական մասսաները հյուժված, քայքայված էին, ժողովրդական անտեսութիւնն ամբողջապես կազմալուծված էր: Սպեկուլյանտների, բարձրաստիճան պաշտոնյաների, խմբապետների խմբակը իր նկուղները լցրել էր թալանած կենսամթերքներով: Պետական պահեստներն իսպառ դատարկ էին, մինչդեռ անհրաժեշտ էր կերակրել վորբերի, գաղթականների, բանվորների հոծ մասսաները: Վրաստանը դեռ զբաղնվում էր մենշևիկների ահրապետութեան տակ և այդ պատճառով էլ հնարավոր չէր Խորհրդային Ռուսաստանից հաց և այլ պարեն ստանալ (Ռուսաստանը Հայաստանին կապող յերկաթուղին անցնում է Վրաստանի վրայով): Այնուամենայնիվ հեղափոխական Ռուսաստանը անմիջապես ոգնութեան է հասնում Խորհրդային Հայաստանին, ուղարկելով բավականաչափ վոսկի դրամ և հաց՝ Ադրբեջանի վրայով: Այդ ոգնութիւնն ավելի ընդարձակ ծավալի յե հասնում, յերբ 1921 թվի սկզբներին Վրաստանում նուշնպես հաղթանակում է խորհրդային իշխանութիւնը:

Սակայն Խորհրդային Ռուսաստանի ոգնութեան հետ միասին անհրաժեշտ էր նաև դուրս բերել խմբապետների, սպեկուլյանտների ժանապօր պահեստներում և նկուղներում թաղցրած հացն ու պարենային այլ մթերքները՝ ժողովրդի ծով կարիքները բավարարելու հա-

մար: Յերիտասարդ խորհրդային կառավարութիւնը ձեռնարկում է հոնֆիսկացիայի յենթարկելու թալանված կենսամթերքները: Սպեկուլյանտները, կուլակները, խմբապետները, ամեն տեսակի առեւտրականներն իսկուշն տեսնում են, վոր խորհրդային կառավարութիւնը վոշմիայն հնարավորութիւն չի տալիս շարունակելու իրենց թալանը, այլ նուշնիսկ թալանված ապրանքները հետ և խլում ժողովրդական մասսաներին վերադարձնելու համար: Իհարկե այդ խմբապետներին և սպեկուլյանտներին դուր գալ չէր կարող: Իսկ ժողովրդի այդ տղուկներն այն ժամանակ դեռ բավական մեծ ուժ էին ներկայացնում մանր-բուրժուական Հայաստանում:

Այս հանգամանքն ողտագործեցին գաշնակցականները և 1921 թվի փետրվար ամսին ապստամբութիւն բարձրացրին խորհրդային իշխանութեան դեմ:

Սակայն Հայաստանի աշխատավորութիւնը, Հայաստանի յերիտասարդ կարմիր բանակը, կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ, կարողացան հակահարված հասցնել թշնամուն և ապրիլի 2-ին Խորհրդային իշխանութիւնը նորից վերահաստատվեց Յերևանում: Դաշնակցական բանդաները զլուխները կորցրած՝ փախան Չանգեղուր, վորտեղից վերջնականապես դուրս քշվեցին կարմիր բանակի և կոմունիստական ջոկատների կողմից:

### ԾԱՆՐ ՎԵՐՔԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Հայաստանի քաղաքացիական կռիվների ավարտումից հետո, խորհրդային իշխանութիւնն անմիջապես ձեռնարկեց գաշնակների հասցրած վերքերի բուժման գործին: Ժողովրդական մասսաներն ամենից առաջ խաղաղութեան և շինարար աշխատանքի կարիքն էին զգում: Խորհրդային իշխանութիւնը տվեց ժողովրդին և խաղաղութիւն և շինարար աշխատանքի հնարավորութիւն: Այլևս վերացել էին ազգամիջյան և իմպերիալիստական կռիվները: Խորհրդային Ռուսաստանից շարունակվեց ստացվել դրամական և կենսամթերքային ոգնութիւն: Գաղթականութիւնը տեղավորվեց ազատ հողերի վրա և սկսեց աստիճանաբար բարեկեցիկ կյանք ստեղծել իր համար: Աշխատավոր գյուղացիութիւնը սկսեց պարապել յերկրագործութեամբ և կարճ ժամանակում յերկիրը վերածվեց ժրջան աշխատանոցի: Վերքերն սկսեցին բուժվել և ժողովրդական անտեսութիւնն արագ քայլերով սկսեց առաջ գնալ: Բանդված, ավերված գյուղերը և քաղաքներն սկսեցին վերաշինվել, յեղած արդյունաբերութիւնը վերականգնվեց և Հայաստանի բանվորն ու գյուղացին առաջին անգամ զգացին, վար իրենք են իրենց աշխատանքի տերերը:

Ընդհանուր առմամբ 1922-ից մինչև 1924 թվականները յեղ-  
 Հայաստանի համար դաշնակներից ստացած ծանր վերքերի բուժման  
 տարիները, 1924-ից մինչև 1927 թվականը բարգավաճման տարիներն  
 իսկ 1928-ից, Սորհրդային Միության առաջին հնգամյակի առաջ  
 տարուց, Սորհրդային Հայաստանը մտավ իր զարգացման նոր փու-  
 մեջ, յերբ սկսեց վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստակա-  
 վերակառուցումը:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ի հարկի անողուտ է նույնիսկ վորև է համեմատություն ան-  
 ժողովրդական տնտեսության 1919 թվի (դաշնակների տիրապետու-  
 թյան որոք) ընդհանուր վիճակի և ներկայի միջև: Բավական է նշել  
 վոր միայն 1931 թվի ժողովրդական տնտեսության արտադրանք  
 տարեկան աճը (79 միլիոն ուրբի) հավասար է 1919 թվի վողջ ժող-  
 վրդական տնտեսության ամբողջ արտադրանքին:

Հայաստանը չափազանց աննշան արդյունաբերական ձեռնարկ-  
 ներ է ունեցել ցարական իշխանության տիրապետության օրերին:  
 Դաշնակների որոք այդ չնչին արդյունաբերությունն էր քայքայվու-  
 ու կրճատվում է: Այսպես, որինակ, Հայաստանի արդյունաբերության  
 ամբողջ արտադրանքը 1913 թվին կազմում էր վողջ ժողովրդական  
 տնտեսության արտադրանքի 21 տոկոսը, իսկ 1919 թվին՝ 8 տոկոս:


Ուրիշ պատկեր է ստանում արդյունաբերությունը խորհրդային  
 իշխանության ժամանակ: 1928—29 թվին արդյունաբերության ընդ-  
 հանուր արտադրանքն արդեն հասնում է 26 տոկոսի, իսկ 1931 թվին  
 42 տոկոսի: Այսպիսով արդյունաբերության տեսակարար կշիռը հսկա-  
 յական քանակությամբ աճում է տարեցտարի: Հայաստանը զու-  
 գյուղատնտեսական յերկրից դառնում է արդյունաբերական-գյուղա-  
 տնտեսական յերկիր:

Ինդուստրացման այդ հաջողությունները հնարավոր են դարձն-  
 այն պատճառով, վոր մեծ գումարներ են մտցված արդյունա-  
 բերության մեջ և մեծ քանակությամբ նոր արդյունաբերական  
 ձեռնարկներ են կառուցված: Այսպես, որինակ, կառուցված են խորհր-  
 դային իշխանության որով անքատիլ մեծ չործարան (Անիսկանում),  
 կարբոնի, ձեթ-ոճառի, բամբակի գտման, մեքենայ-իչ-ն, բազալտի  
 կոնսերվի և մի շարք այլ գործարանները Յերևանում: Եւրոպայի վաճառ-  
 վում է Դավալուչի ցեմենտի մեծ գործարանը, Լարաքիլիսայի քի-  
 միական կոմբինատը և այլն:

Հայաստանի լեռնային արդյունաբերությունը (հանքերի շահա-  
 գործումը) մեծ ծավալ է ընդունել հասկապես խորհրդային իշխանու-  
 թյան որով: Ալյանվերդու ու Լափանի պղնձահանքերը վերակա-

առուցված են և աշխատում են մեծ թավով: Արթիկի թանկարժեք շի-  
 նարարական քարի՝ սուֆի և Անիի չեչաքարի (պեմզայի) արդյունա-  
 հանումը սկսվել է խորհրդային իշխանության որով և մեծ չափերի յե  
 հասել: Այդ արդյունաբերության մեջ աշխատում են տասնյակ հազա-  
 րավոր բանվորներ: Հայաստանի վողջ արդյունաբերությունը, ըստ  
 հնգամյա պլանի, պետք է տար 363 միլիոն ուրբու արտադրանք:  
 Այդ պլանը արդեն կատարվում է գրեթե 4 տարում:

Ասանձնապես հսկա յեն Սորհրդային Հայաստանի նվաճումները  
 յերկրի երկկարոֆիկացիայի և անմշակ դաշտերի վողջման ասպարի-  
 գում: Սորհրդային իշխանության որով կառուցվել են 2 հիդրոէլեկ-  
 տրոկայաններ: Յերևանում, 1 Լենինականում, ավարոված է Զորագե-  
 մեծ հիդրոկայանը, կառուցվում է Քանաքեռի ավելի խոշոր հիդրոկա-  
 յանը: Չենք խոսում մի շարք այլ հիդրոկայանների մասին, վորոնք



Զորագեռի տոնի կառուցման մի պատկեր

կառուցված են Հայաստանի դանազան շրջաններում: Յարերի և դաշ-  
 նակների որով Հայաստանը չի ունեցել և վող մի հիդրոկայան: Հիդրո-  
 կայանների ուժը 1931 թվին կազմում էր 19486 կիլովատ: 1928—29  
 թվի 9702 կիլովատի փոխարեն:

Յերկրորդ հնգամյակի սկզբից—1933 թվից, սկսվում է Սևանի  
 հիդրոկայանների կառուցումը: Ընդամենը 10 հիդրոկայաններ են կա-  
 ուցվելու: Զանգու գետի վրա, վորոնք ոչտադործիլու յեն Սևան լճի  
 սուցվելու: Զանգու գետի վրա, վորոնք ոչտադործիլու յեն Սևան լճի  
 ջրերը: Այդ հիդրոկայանների ընդհանուր ուժը հավասար է լինելու  
 500000 կիլովատի: Սևանի սիստեմի հիդրոկայանների կառուցումը  
 Դենպրոգեսի ծավալի գործ է և պահանջում է 2—300 միլիոն ուրբ-  
 ու ծախս: Նրանց կառուցումը վող միայն Ս. Հայաստանի, այլ նաև

Անդրկովկասի և վողջ Խորհրդային Միութեան փառափոր նվաճումներից մեկն է լինելու:

Հայաստանի անձաղ և խոպան հողերի վուուզման ասպարիզում նույնպես մեծ աշխատանք է տարել խորհրդային իշխանութունը 1925 թվին Հայաստանի ջրվող հողերի տարածութունն էր 87 հազար հեկտար, իսկ 1932 թվին՝ 144600 հեկտար: Ավարտված է Փոքր Սարգարատի, Կարճևանի, Եջմիածնի, Շիրակի և այլն ջրանցքների կառուցումը: Ավարտվում են նույնպես Դուբրի հսկա տարածության վուուզման աշխատանքները և, Սևանի սիստեմի հիդրոկայանների կառուցման հետ, կուեծվի նաև Մեծ Սարգարատի ընդարձակ տարածությունները ջրելու խնդիրը:

Ընկ. Լենինը դեռ իր ժամանակին պատվիրել էր Հայաստանի Անդրկովկասի կոմունիստներին մեծ ուշադրություն դարձնել յերկրվուուզման և երկտրոֆիկացիայի աշխատանքներին: Կուսակցությունը կատարում է մեծ ուսուցչի պատվերները:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարիզում Խորհրդային Հայաստանը հետ չի մնում Խորհրդային Միության ընդհանուր թափից: Այս ասպարիզում նույնպես նվաճումներն անվիճելի յեն: Հայաստանի չքավոր և միջակ գյուղացիների 36 տոկոսը համախմբված է կոլտնտեսությունների մեջ: Հայաստանում գոյություն ունի 67 խորնտնտեսություններ: Հայաստանի գյուղն ունի մինչև 300 տրակտորներ, իսկ առաջիկա զարնանից Հայաստանի շրջանների կեսից ավելին պետք է ունենան իրենց մեքենա-տրակտորային կայանները: Մեծ չափով աճել է նույնպես ցանքսերի տարածությունը: 1930 թվին Հայաստանի ցանքսերի տարածությունը հավասար էր 343 հազար հեկտարի, իսկ 1932 թվին՝ 430 հազարի: Ցանքսադաշտերի տարածության ընդարձակումը կատարվել է մեծ մասամբ ի հաշիվ թանկարժեք տեխնիկական բույսերի՝ բամբակի, ծխախոտի և այլն: Այսպես, բամբակի ցանքսի տարածությունը 2 անգամից ավելի յե աճել 1933 թվի համեմատությամբ: Ներկայումս Հայաստանի խորհրդային իշխանությունը վճռական միջոցներ է ձեռք առնում ցանքսի վորակը բարելավելու և բերքատվությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կուլտուրական շինարարության ուղղությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նույնպես մեծ նվաճումներ են ձեռք բերել: 1931—1932 ուսումնական տարվանից Հայաստանում կիրառված է ընդհանուր պարտադիր ուսումը: Բացվել են բազմաթիվ մանկապարտեղներ, դպրոցներ, տեխնիկումներ և այլն: Հայաստանում գոյություն ունեն 11 բարձրագույն ուսումնական հիմնարկներ (ինստիտուտներ), բազմաթիվ գրադարաններ, պետական թանգարան, թատրոններ, հանրային մատենադարան և այլն և այլն: Սոցիալիզմ կառուցող բանվորներն

ու գյուղացիներն ու նրանց զավակները մեծ թափով լծված են ուսման գործին, տեխնիկային տիրապետելու գործին:

Խորհրդային Հայաստանի տնտեսական կուլտուրական վերելքն ու զարգացումն արդյունք է լենինյան կուսակցության աղգային ճիշտ քաղաքականության: Անցյալներում լինելով արդյունաբերությունից զրեթե զուրկ և հետամնաց մանր գյուղացիական յերկիր, Հայաստանը խորհրդային իշխանության որոք հսկայական ոժանդակություն ստացավ ԽՍՀՄ-ից՝ սոցիալիստական արդյունաբերություն ստեղծելու և գյուղատնտեսությունը վերակառուցելու համար:

Ի հարկե Խորհրդային Հայաստանի անտեսական-կուլտուրական շինարարության պատկերը մենք լրիվ չսովինք: Մեծ են այդ նվաճումները բոլոր բնագավառներում: Սակայն այսքանն էլ բավական է, վորպեսզի հասկանալի լինի, վոր Հայաստանն արագ տեմպերով կերպարանափոխվում է և դառնում է Խորհրդային Միության ծաղկած հանրապետություններից մեկը: Նախկին հետամնաց ցարական դադութի աշխատավորությունն այսոր ձեռք ձեռքի տված անդրկովկասյան մյուս հանրապետությունների և ամբողջ Խորհրդային Միության բանվորներին ու կոլտնտեսականներին, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կառուցում է սոցիալիզմի փառափոր շինքը:

ԱՇԽԱՏԱՆՔ

1. Քարտեզի վրա գտեք Խ. Հայաստանը, վորոշեք նրա սահմանները, գտեք գետերն ու լճերը, բարձրավանդակն ու դաշտավայրը:
2. Ցույց տվեք այն վայրերն, ուր զարգանում է Հայաստանի արդյունաբերությունը:
3. Հողվածի թվերից կազմեք դեպքամներ:
4. Ուսուցիչների զեկավարությամբ դպրոցում կազմակերպեցեք նոյեմբերի 29-ի տոնը:

ԽՍՀՄ-Ն ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՑԵՂԲԱՅՐԱԿՍ.Ն ՄԻՈՒԹՅՈՒՆՆ Ե

(12-րդ շարելիցի առթիվ)

Հպարտ սլարգել ես զրոշը կարմիր,  
Մասիսից բարձր, արևից ել վառ.  
Յերկիր իմ հերոս, պայքարի՛ յերկիր,  
Դեռ յերեկ տանջված, տեսնկ ու խավար:

Ու արևելքի, հարավի շեմքին  
Հաղթականորեն զարկել ես վրան.  
Նայում ես նրանց, ժպիտը գեմքիդ,  
Վողջունում նրանց սրտով հուրհրան:

Ու մըրկաթափ զայրուլթով հիշում  
Տարիները սև, տարիներն անցած,  
Նրանց, վոր բերրի հողդ եյին մաշում,  
Նրանց, վոր արդեն չկա վերադարձ:

Նրանց, յերեկվա լլտի հյուրերին,  
Այն հերոսներին արյան ու սրի.  
Տվել ես նրանց մահու հողմերին,  
Յերկիր իմ հերոս, յերկիր իմ արի:

Հորդում են հիմա յերակները քո,  
Թով գոտիներով դաշտերդ ցանցում.  
Քո հին լեռներում ամեն յերեկո  
Իլիչի լամպն ե պայծառ առկայծում:

Հպարտ զարկել ես դու կարմիր վրան.  
Մասիսից բարձր, արևից ել վառ.  
Յե՛վ հաղթաբազուկ, սրտով հուր-հրան  
Կովում ես անհաղթ զալիքի համար:

ԿԵՑՑԵ՛ ԼՍՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆՍՅՄԱՆ  
12-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ:

Սեվանի լիճը գտնվում է Խորհրդային Հայաստանում: Նա ծովի մակերեսից բարձր է 2 հազար մետր: Նրա յերկարությունը 75 կիլոմետր է, իսկ լայնությունը՝ 45 կիլոմետր: Լիճը բազկացած է յերկու ավազանից: Մեծ ավազանը ծանծաղ է, մոտ 50 մետր խորությունը, իսկ փոքր ավազանը՝ համարյա յերկու անգամ խորն է:

Շրջապատի լեռներից լիճն են թափվում 27 վտակներ, իսկ լճից դուրս է գալիս մի գետակ: Իս արագահոս Հրազդանն (Զանդին) է: Հազարավոր տարիներ Սեվանի ջրերն անողուտ ծփացել են անազին ընկալող տարիներ Սեվանի ջրերն անողուտ ծփացել են մի-մի արձրություն վրա, ամեն տարի իդուր գոլորշիացնելով ողում մի մի-մի արձր 200 խորանարդ մետր ջուր:

Սեվանից բավական ներքեվ, ալիքավոր Հրազդանի հոսանքով ձգված են Հայաստանի անջրդի տարածությունները, վորոնք կոչվում են Դոնը և Մեծ Սարդարբաթի հարթությունը, ընդամենը 130 հազար հեկտար տարածություն:

Սեվանի լիճն երկարական ուժ ստանալու մեծ ազդուր է: Արդին մշակվել է Սեվանի ջրերից Հրազդան գետի վրա մի շարք հիդրոէլեկտրակայաններ կառուցելու պլանը: Յերկրորդ հնգամյակում ավարտվելու Սեվանի հիդրոէլեկտրակայաններից մի քանիսի կառուցումը: Սեվանի հիդրոէլեկտրակայանները տեղ են գրավելու Խորհրդային Միության վիթխարի հիդրոէլեկտրակայանների առաջին շարքերում: Նրանք ունենալու յեն 480 հազար ձիու ուժ և տարեկան տալու յեն 2 միլիարդ 500 միլիոն կիլոՎատ ժամ երկարակյանություն: Իրա համար լեռների լայնությունը Սեվանի հատակից սնց է կացվելու 8 կիլոմետր յերկարությունը: Սեվանի հատակից սնց է կացվելու յեն իննը հիդրոէլեկտրակայաններ: Այդ տոնների միջով, Հրազդանի յերկարությունը ձգվող հիդրոէլեկտրակայանների շարքերով հեռահեռ կսկսեն իջնել Սեվանի գարեփուր ջրերը: 65 տարի հետո Սեվանի մեծ ավազանը, վորը ավելի ծանծաղ է, բոլորովին կչորանա: Այդ տարածության վրա հարավոր կլինի անհցնել արժեքավոր սելենիական բույսեր: Բայց լճի փոքր ավազանը գարձյալ կունենա 50 մետր խորություն:

Տոննելով հստոյ ջրով կսկսեն աշխատել իննը հիդրոէլեկտրակայաններ: Առաջին հիդրոէլեկտրակայանի ջուրը հերթով կանցնի մնացած բոլոր հիդրոէլեկտրակայանների տուրբինները և կալիլացնի նորանոր միլիոնավոր կիլոՎատ ժամերի երկարական ուժ:

Մտադրություն կա Անդրկովկասի յերեք հանրապետությունների՝ Ազրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բոլոր հիդրոէլեկտրակայանները միացնել վորպես հզոր երկարական մի փունջ: Այդ փնջի կարգավորման ղեկավար դերը կատարելու յեն Սեվանի սիստեմի հիդրոէլեկտրակայանները:

Սեփանից դուրս յեկող ջրերը բացի ելեկտրական ուժ տալուց, վտոգելու յեն Հայաստանի Ղուերը ու Սարդարաբասի 130 հազար հեկտար տարածութիւնները, այնուհետեւ այդ ջրերի ահագին պահեստները վտոգելու յեն Հայաստանի և Նախիջևանի ինքնավար հանրապետութիւնների դաշտերը:

Սեփանի ողտագործման խնդիրն ուսումնասիրելու համար Հայաստան ելին յեկել իտալացի ինժեներները, վորոնց գլխավորն էր Ոմեդիոն: Նա հետեւյալն ասաց Սեփանի լճի ողտագործման մասին.

— Խորհրդային կարգերը տեխնիկայի համար բաց են անում այնպիսի հնարավորութիւններ, վորոնց մասին չեն կարող յերազել արեւմտյան ինժեներները: Ձեր յերկրի ինժեներները, վորոնք հնարավորութիւն ունեն այդպիսի համարձակութեամբ և այդպիսի չափով աշխատանք տանելու, կարող են համարվել աշխարհի ամենայնըջանիկ մարդիկը:

Սեփանի աշխատանքների պլանը ներկայումս ավարտված է յեվ սկսվելու յեն կառուցման աշխատանքները:

«Սեփանի խնդիրն յերկրորդ հնգամյակի ամենահետաքրքիր աշխատանքներից մեկն է: Ահագին լիճը հազարամյակների ընթացքում անողուտ խփել է ժայռոտ փեղերին, գոլորշիացնելով իր յերկնագույն թափանցիկ ջուրը: Բուլբուլիկները կարողացան իրացնել անողուտ ընկած հարստութիւնների ամենալրիվ ողտագործման պլանը: Սեփանի ջրի յուրաքանչյուր կաթիլը պետք է առավելապէս ողտագործել մեր սոցիալիստական անաստութեան անձանց համար» — գրում է «Պրավդա» թերթը:

Խորհրդային Հայաստանի պրոլետարիատը Խորհրդային Միութեան պրոլետարիատի աջակցութեամբ մեծ յեռանդով կկատարի յերկրորդ հնգամյակի վիթխարի պլաններից մեկը — Սեփանի հիդրոէլեկտրակայանների կառուցումը, տանելով սոցիալիզմի փոռավոր հաղթանակը Հայաստանում և Անդրկովկասում:

## ՄՐՐԿԻ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՅԵՐԳԸ

Քառասուն տարի սրանից առաջ ցարական կառավարութիւնն ամուր շղթայակապել էր Ռուսաստանը՝ Սովը յեվ աղքատութիւնը խեղդում էլին գյուղն ու քաղաքը:

Վոստիկանական մտրակի տակ արցունք և արյուն էր թափում աշխատավոր Ռուսաստանը:

Բայց արդեն յերկիրը խուլ ալեկոծվում էր, մոտենում էր 1905 թվի հեղափոխութեան մըրիկը:

Պոռթկում էլին դործադուլներ և անցնում էլին մի գործարանից մյուսը: Բռնկվում էլին գյուղացիական բազմաթիվ ապստամբութիւններ: Անչեզալ ու գաղանի յեր աշխատում բուլիվիկյան կուսակցութիւնը: Լենինի զեկավարութեամբ նա կառուցում և ամրացնում էր իր շարքերը: Վորտում էր մեծ մըրիկը, մոտենում էր մեծ հեղափոխութեանը:



Յեվ յերիտասարդ գրողի զգայուն ականջը լսեց մոտեցող հեղափոխութեան զորդունը: Աշխուժ և ուրախ «մըրիկի յերգը» վողջունեց նրան. «Թող ավելի ուժեղ վորոտա մըրիկը», կանչում է հեղափոխութեան հաղթանակի մարգարեն: Այդ մըրիկը յերգող հեղափոխութեան հաղթանակի լրաբեր պրոլետարական գրողն էր՝ Մաքսիմ Գորկին (Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկով):

## ԲՈՒՆԵՎԻ՛ ԳՐՈՂԻ ԶԱՆԱՊԱՐԸ

Գորկու իսկական անունն ու ազգանունն՝ Ալեքսեյ Պեշկով է, նա ծնվել է 1868 թվականին՝ Նրա հայրը մեռել է ղեռ յերբ նա 5 տարեկան էր:

Փոքրիկ Ալեքսեյի համար սկսվեց դժվարին կյանք: Սկզբում նա տեղավորվեց ծերացած և ժլատ պապիկի մոտ: Պապը հաճախ ծեծում էր Ալյոշին: 7 տարեկան հասակից նրան տվեցին դպրոց: Յարական դպրոցը յուր կարգ ու կանոնով դուր չեկավ Ալյոշային և նա թողեց դպրոցը: Նա սովորում էր ինքնուրույն, ամեն մի ազատ վայրկյան նվիրում էր ընթերցանութեան: Ներկայումս Գորկին աշխարհիս զինուորում և կուլտուրական մարդկանցից մեկն է: Այդ գիտելիքները տվել է նրան գիրքը և կյանքը:

Մեռան Ալեքսեյի մայրը, պապը. սնտեսապէս ավելի վատացավ Ալեքսեյի կյանքը: Ինչը տարեկան յերիտային տվեցին կոշիկի խառնուրդ, Այնտեղ տիրում էր խաբէբայութիւնն ու կողոպուտը: Ալեքսեյին ծաղրում էլին այնտեղ:

Յեվ այդպէս պտրվեցին թափառական տարիները:



# ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՐ

Արևն այսօր կարծես ծուլացել է և դեռ դուրս չի յեկել սարերի հետևից: Զորում՝ գետից բարձրանում է բամբակի պես ծաղկուն, սպիտակ մառախուղը: Կամաց-կամաց զարթնում են շրջակա թավ անտառները: Հազար տեսակ թռչունների ծլվլոցը, ճովողյունը միախառնվելով իրար՝ ստեղծում են մի գեղեցիկ ներդաշնակ յերաժշտութուն, մի հրաշալի համերգ, վոր քնքրորեն շոյում է մարդու լսելիքը: Հեռվում ծփծփում, ծափ է տալիս ծովը: Այնտեղից դեպի սարերը փչում է մարմանդ հովը:

Սարալանջերին, բլուրների վրա, գետի հովտում, ձորերում, անտառից մաքրած բացատներում տնկած կանաչ ծխախոտը աճել, բարձրացել է և շուրջը տարածել մի դուրեկան բուրմունք: Զեփյուռն որորում է ծխախոտի կանաչ ծովերի ալիքները:

Իրանք կոլտնտեսության ծխախոտի արտերն են...

Վարդանի Գեվորգն այսօր շատ վաղ է վեր կացել: Նա իր զանգակով բրիգադի համարյա բոլոր անդամներին բորձրացրել է անկողնից: Բրիգադից պակասում են միայն Յեղեկը և Հարութը: Բոլորը գիտեն, թե ինչու նրանք չկան:

Թեև մյուս արտերում դեռ մնացած բրիգադները չեն յերևում և դեռ արևը չի բարձրացել, բայց Վարդանի Գեվորգի բրիգադն սկսել է ծխախոտի քաղը: Նրանք պիտակցում են, վոր ժամանակը թանկ է և պետք է շտապել: Յեթե ուշացնեն և ժամանակին՝ չհավաքեն՝ ծխախոտը կփչանա և կկորչի իրենց աղաչվա կատարած ամբողջ աշխատանքը:

— Գեվորգ,—ասում է 90 տարեկան Ալեք պապը,—Յեղեկի և Հարութի արածը յերիտասարդի արարք չե: Թեև ծեր եմ, հին մարդ եմ, բայց հարբեցողության դեմ եմ և չեմ խմում: Պարել յես ել եմ սիրում, կոր պարերն ուղղակի վոսկորներս խաղացնում են, բայց վոչ նրանց պես: Աշխատանքի այսօրվա տաք ժամանակ հարբելը չափազանց դատապարտելի չի:

Ալեք պապը չնայած իր պատկառելի հասակին, հարվածային կոլտնտեսական է: Մի շարաթ առաջ նա անաստվածների միության անդամ է զրվել:

— Ճիշտ է, պապ, ճիշտ է,—պատասխանում են այս ու այն կողմից աշխատող կոլտնտեսականները,—նրանք թեև ջահել են, բայց կուլակային ազիտացիայի ազդեցության տակ են ընկնում:

Վարդանի Գեվորգը վոչինչ չի պատասխանում, նա մտածում է այն մասին, վոր այդ յերկուսը զցում են բրիգադի հեղինակութունը:

— Վոչինչ, ասում է Թղթակից Սուրենը,—վաղը սփրսում է իրենց յերեսը կտեսնեն:

Մյուս խոսակցութունը կոլտնտեսականներին ալելի յե յեռանդի բերում: Մխախոտի տերևահատը մի նոր թափ է ստանում: Կոլտնտեսականները կուցած յերկու ձեռքով արագ-արագ պոկում են տերևները և իրար վրա դարսած տերևները թողնում են շարքերի մեջ:

Հայկանուշը և Վարսենիկը հավաքում են տերևների փնջերը և վազելով համում են կողովներ կրող կարագետին և Զանիկին:

Կողովները կրում են մեջքով մինչև արտի ծայրը, իսկ այնտեղից կոլտնտեսության սայլերը ծխախոտի տերևներով լցված կողովները տանում են մաքաղը:

Զանիկը կոմյերիամիության քարտուղարն է: Նա անցյալ օրը կոմյերիամիության ուսուցից ստացել է ուսուցիչի փոխանցիկ դրոշմ:

Նա խրախուսում է, ուժ է տալիս տղաներին: — Ամոթ է տղերք, թափերն ուժեղացնենք, փոխանցիկ դրոշմ մեր ձեռքից բաց չթողնենք:

Հեռու բլուրների լանջերին տեղ-տեղ սկսում են յերևալ սև-սև վառվող կետեր: Իրանք կոլտնտեսության մյուս բրիգադների կոլտնտեսականներն են:

Վարդի պես սկսում են վառվել հեռու սարերի ձյունապատ գագաթները: Այդ կովկասյան լեռնաշղթան է:

Ահա բարձրանում է նաև ուրախ և հուրհրան արևը: Պատկերն իսկույն փոխվում է: Հեռուներում սկսում է հայելու պես շողշողալ արծաթագույն ծովը: Այս անգամ ծովը վոչ թե ծփում է, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի:

Պատկերն իսկույն փոխվում է: Այս անգամ ծովը վոչ թե ծփում է, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի:

Պատկերն իսկույն փոխվում է: Այս անգամ ծովը վոչ թե ծփում է, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի, այլ կարծես թե ծիծաղում է և նրա շառայունը նմանում է կարեի:

— Ընկերներ, շուտ արեք,—ասում է բրիգադիր Վարդանի Գեվորգը,—արեվն սկսում է վառել:

Բրիգադիրի ազդանշանն ասում է կոլտնտեսականներին, վոր պետք է շուտ քաղել, վորովհետև, յերբ արևն սկսում է ուժեղ տաքացնել, ծխախոտի քաղված տերևներն արևի տակ խաշվում են և անպիտանում են շարիւռ համար...

...Սկանում են քաղողների ձեռքերը, տերևների յուզոտ դեֆիրը պատում է մատները: Իրտինքն սկսում է առատորեն հոսել և հեազհեպատում է մատները: Իրտինքն սկսում է առատորեն հոսել և հեազհեպատում է մատները:

Արևի ճառագայթների ազդեցությունից ծխախոտի կանգուն տերևներն սկսում են թուլանալ և կախվել կարծես ջրի պակասությունից:

նից թառամում են: Իսկ քաղված տերեւները մնալով արեւի ասկ, իսկապես սկսում են խաչվել:

— Բավական ե քաղածը,—ասում ե վարդանի Գեվորգը: Բոլորը դադարում են քաղելուց ե շտապում են ծխախոտը շարելու մարազը:

Յերբորդ քրիզագի մարազը շատ մեծ ե ե գտնվում ե ծխախոտի արտերի մեջ, դեպի քաղաք տանող խճուղու մոտ: Մարազը յերկարավուն ե, շինված տախտակից, մի կողմը բոլորովին բաց ե, կարծես մի կողմի պատը հանված ե: Բաց կողմից ձգվում են փայտե ուղաններ, վորոնք իրարից յերեքական մետր հեռու յեն ե մեկ մետրաչափ բարձր են գետնից ե ամրացված են գետնի մեջ խրված ցցերի վրա: Ռեյնների վրա քաչվում են այսպես կոչված՝ վագոնները, վորոնք իսկապես փայտերից շինված շրջանակներ են: Այդ շրջանակների վրա ամրացվում են թելերը, վորոնց վրա շարված են լինում ծխախոտի տերեւները չորացնելու համար:

Կես ժամով կոլտնտեսականները նստեցին, հենց այնտեղ, մարագում, կոլեկտիվ ճաշի:

Ճաշը վերջացնելուց հետո, կոլտնտեսականները տեղավորվեցին մարագի դանազան ժասերում, հատակին խնամքով դարսված ծխախոտի տերեւների մոտ: Աշխատանքի կոնվեյերը փոխվեց: Հիմա տասից ավելի կոլտնտեսականներ, վորոնց թվում նաե Սուլ Հակոբը, Արշակի Դանիլը, Ալեք պապը, վերցնում են շամփուրի պես յերկար մախաթները ե սկսում են վարպետորեն առանց մատները ծակելու տերեւները կոթերից ծակելով անցկացնել մախաթների վրա: Կես մետրաչափ ասեղները մի քանի բույսերում արագ լցվում են տերեւներով: Տերեւների անուշ ճրթճրթոցը լսում ե անդամ Սուլ Հակոբը ե յեռանդի յե աւնում: Հայկանուշը ե վարսենիկն արագ կերպով վերցնում են լցված մախաթները ե յերկու ձեռքի շարժումով տերեւներն անց են կացնում մի քանի մետր յերկարություն ունեցող թելերի վրա:

— Գալիս ե Յեղեկը, գալիս ե,—նկատում ե մեկը:

Հեռվից չորացած արեւածաղկի պես դլիկիւր գալիս ե Յեղեկը: Յեղեկի գալուստը գրավում ե մի քանիսի ուշադրությունը:

- Յեղեկ, արաղը յանի շատ գոռեց:
- Յեղբայր, ի՞նչ արաղ, ի՞նչ բան, մի քիչ թեթրեմե)\* թոանք, հոգնեցի:
- Վճնց չե, ծաղրում ե վարդանի Գեվորգը:
- Իսկ Հարութը ուր ե, հը՞, —հարցնում ե Ալեք պապը:
- Յես ի՞նչ իմանամ, քո յեղբոր տղան ե, դու կգիտենաս:

\*) Սոչու ե Հայկական ուսյոնի հայերի մեջ տարածված ժիւ պար:

- Յերբեք ել վոչ. սխալվում ես:
- Սիմուլյանտ եք՝ իրար կգիտենաք:
- Դեհ, շուտ, աշխատանքի անցի: Հերիք չե վոր ուշացել ես, դեռ յերկար ու բարակ խոսում ես:
- Նորից ճոթճոթում են տերեւները...
- Արդեն յերեկո յե:
- ...Այսօր արևն ինչ վոր ծուլացել ե ե շտապում ե թաղնվել սարերի հետևը:
- Վոչինչ: Նրանք առանց արևի յել դուրս կգան գիշերային աշխատանքի:

## ՆՈՐ ԹԱՓՈՎ ՊԱՅՔԱՐԵՆՔ ՈՒՍՍԱՆ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

«Ուսման Հարվածայինի» № 3-ում մենք ծանոթացրինք ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 6-ի վորոշման հետ մեր դպրոցների մասին:

Այս համարում մենք կծանոթացնենք ձեզ Կենտկոմի յերկրորդ վորոշման հետ՝ Նորից դպրոցի մասին, վ ը կայացել ե այս տարվա ոգոստոսին 25-ին:

Ի՞նչ վորոշում ե այդ, ի՞նչ ցուցմունքներ ե առիւս մեզ՝ կոմունիստական կուսակցության այդ դեկավար որդանը:

Նա նշում ե, վոր անցյալ տարվա իր սեպտեմբերյան վորոշումից հետո, մեր դպրոցները մեծ աշխատանք են տարել ուսման վորակը բարձրացնելու գործում: Աշակերտներն սկսել են լեզու, մաթեմատիկա, բարձրացնելու գործում: Աշակերտներն ել ավելի լավ աշխարհագրություն ե ուրիշ հանրակրթական առարկաներ ավելի լավ սովորել: Ուսման գործը բավականին կարգի յե ընկել կա կայուն դասացուցակի ծրագրի: պլանների:

Բայց դրան զուգընթաց Կենտկոմը գտնում ե, վոր դեռ ուսման գործը հարկավոր չափով լավ չի դրված. դեռ դպրոցը չի վերացրել իր արմատական բեռությունները. պետք ե, վոր ուսման վորակն ել ավելի արմատական բեռություններն ել ավելի լավ ե կանոնավոր սուբորեն, լավ յուրացնեն հանրակրթական առարկաներն, այսինքն՝ լեզու, մաթեմատիկա, բնագիտություն, աշխարհագրություն, հասարակագիտություն ե այլն:

Ի՞նչ ե պատճառը, վոր մեր դպրոցներում դեռ ուսումը լավ չի դրված:

Կուսակենտկոմն այդ բացատրում է մի քանի պատճառներով: Պատճառներից մեկը նա յե, վոր դպրոցական ծրագրերը, վոր կազմված են յեղել անցյալ տարի, ունեն մի շարք թերութիւններ: Կենտկոմն առաջարկում է Լուստողիկոմատին ծրագրերի այդ թերութիւնը վերացնել, ուղղել և մինչև 1933 թվի հունվարի 1-ը ուղղած, վերաձևակված ծրագրերը հասցնել դպրոցներին:

Ուսման վորակի դեռ ցածր լինելու յերկրորդ պատճառն այն է, վոր շատ դպրոցներում ուսումնական աշխատանքը լավ ձեւերով, հաջող մեթոդներով չի տարվել: Որինակ՝ մշտական բրիգադներ են կազմված յեղել աշակերտներից, վորոնք ամեն մի աշխատանք անպայման բրիգադով են կատարել: Նպատակահարմար է յեղել այդ ձեւով թե չէ, միևնույն է: Կենտկոմը հրահանգում է դպրոցներին և ուսուցիչներին, վոր աշխատանքը լավ մեթոդներով, լավ ձևերով կազմակերպեն, այնպէս կազմակերպվեն, վոր աշակերտներից ամեն մեկը կարողանա լրիվ կերպով սոված դիտելիքները յուրացնել, վոր կարողանա և ինքնուրույն աշխատանքի վարժվել և կոլեկտիվ աշխատանքի: Ուսուցիչը պետք է զանազան մեթոդներ ոգտագործի և վոչ թե միայն մեկ մեթոդով աշխատի: Որինակ՝ նայած թե ինչ առարկայից է դասը, կամ թե ինչ նյութ է մշակվում, կարող է կազմակերպել զբոսայց, կամ թե եքսկուրսիա, փորձեր անել, քարտեզի վրա կամ նկարի վրա բացատրել: Բրիգադներն էլ մշտական լինել չեն կարող, յեթե դասի նյութը հարմար է մշակել կոլեկտիվ կերպով, կարող են կազմակերպել բրիգադներ, վորոնք աշխատանքը վերջացնելուց հետո՝ նորից ցրվում են:

#### ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսման վորակի վերջնական լավացման համար յերրորդ միջոցն է կարգապահութեան բարձրացումը:

Կուսակենտկոմը նշել է, վոր մեր դպրոցներից շատերում կարգապահութիւնը շատ թույլ է. մի քանի դպրոցներում էլ վոչ մի կարգապահութիւն չկա:

Ինչ պիտի անենք, վոր դպրոցում ուժեղանա կարգապահութիւնը:

Ամեն մեկս պետք է իր աշխատանքներին վերաբերվի դիտակից կերպով: Դասի ժամանակ պետք է լուրջ կերպով աշխատել, կատարել այն, ինչ վոր հանձնարարում է ուսուցիչը: Դասից ուշանալը, աղմուկը, անտեղի գուրս ու ներս գնալը, վիճելն ու ընկերոջ հետ կովելը շատ խանգարում են աշխատանքին, թուլացնում ուսման վորակը: Ամեն մեկ աշակերտ պետք է ուսուցչի կամ դպրոցի վարչի կարգադրութիւնները ժամանակին ճշտութեամբ կատարի և լավ վորակ տա: Տան համար տված աշխատանքներն էլ պետք է լավ կատարել:

Դասերից դուրս, դասամիջոցներին, դպրոցում, փողոցում թե տանը՝ պետք է կազմակերպված պահենք մեզ, վորպես Լենինի պատգամների լավ կատարողներ: Դասի ժամանակ՝ լուրջ պարապենք. խաղի ժամանակ՝ խաղանք: Անկարգութիւն, կռիվ, քաջաշոց, նստարանների և այլ կարասիքի կամ թե դասական պիտույքների փչացնելը կենտկոմը համարում է միանգամայն դատապարտելի:

Ամեն մի աշակերտ, ինչպէս և դպրոցի աշկոմը, դասկոմները, պիտինր կազմակերպութիւնները պետք է իրենց ընկերների մեջ դաստիարակչական աշխատանք տանեն և ոգնեն այդ գործում ուսուցչին ու դպվարին:

Պետք է ծնողներին էլ զբաղել այդ աշխատանքին:

Կուսակենտկոմը հրահանգում է դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքներով կարգապահութիւնն ամրացնել դպրոցում:

Իայց դրա հետ նաև նշում է, վոր դպրոցից կարող են հեռացվել այնպիսի աշակերտներ, վորոնք շարունակ խախտում են դպրոցական կարգապահութիւնը, չեն յենթարկվում վարչին և ուսուցչի կարգադրութիւններին, վերավորում են ուսուցչին, փչացնում են դպրոցի գույքը: Այդպիսիները մինչև յերեք տարով կարող են դպրոցից հեռացվել:

Կազմակերպված կերպով տանենք մեր աշխատանքները: Ամրացնենք կարգապահութիւնը դպրոցում: Բարձրացնենք ուսման վորակը: Այդ բոլորը կատարելու համար ծավալենք սոցմրցումն ու հարվածայնութիւնը:

Կատարենք Կուսակենտկոմի վորոշումները:

#### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Խմբի ընդհանուր ժողովում (դասից դուրս, ազատ ժամին) ուսուցչի ղեկավարութեամբ մշակեցնք կենտկոմի այդ վորոշումները և սոցմրցման պայմանադրեր կազմեցեք, մի ուրիշ խմբի հետ մրցելու՝ այդ վորոշումները կատարելու համար:

2. Կարգացեք ձեր ծնողներին այս հոգվածն ու նրանց քաջեք դպրոցական աշխատանքներին:

3. Ամեն մեկ աշակերտ թող կազմի իր հարվածային պարտա վորագրերը՝ աշխատանքներին դիտակից վերաբերվելու և դպրոցական կարգապահութիւնը ամրացնելու համար:

ՃԱԳԱՐԻ ՄԱՍԻՆ

Դասակարգային թշնամին,  
Ինչպես քամին,  
Մտնում է բացված ձեղքերից,

Այստեղ էլ բամբասում է ճաղատից:

— «Ճագարի միսը հոտած է,  
Մորթին անպետք է, փթած է,  
Պահելը դժվար է, ասում են,  
Ոձն ու առնետը վնասում են,  
Թեյե՛վ բազմանում է արագ,  
Բայց հաճախ  
Ընկնում է համաճարակ...  
Վերջապես... մեզ չի սազում,  
Վորովհետև մեծ խնամք է ուզում...»

Այս գանդատը առասպել է:

Այդքան էլ դժվար չէ պահելը:  
Իհարկե խաղ չէ,  
Վոչ մի բան էլ ծիծաղ չէ,  
Ամեն ինչ խնամք է պահանջում:

Ճագարը—  
Դառ է,  
Ոգտակար կենդանի յե, այնքան—  
Միսը համեղ է, դուրեկան,  
Բուրգը՝ անգին,  
Մորթին թանկագին,  
Տալիս է ամուր կաշի—  
Կարմիր կոշիկ ու մաշի...

Ճագարը սպասում է մեզ  
Սրտակեզ,  
Վոր տանք  
Խնամք,  
Աշխատանք,  
Վոր հետո յե՛լ ոգուտ ստանանք...

Կուլակը յե՛վ նրա ազենար  
Ամեն մի նորութունն ատում են:  
Ով հասկացող է, գրագետ է,  
Ճագար բազմացնելուց բացի,  
Պետք է անխնա հարվածի  
Աջ-սպարտունիստական թերազնահատումը:

Հեռվից պաղ նայելը  
Մեզ անվայել է,  
Սպասելը՝  
Հանցանք է բացարձակ,  
Բոլշևիկի պես լինենք համարձակ:

Մոտենանք ու սեփական ձեռով  
Ճագարին շոյենք սիրով,  
Շահենք,  
Պահենք,  
Բազմացնենք յեռանդուն սրտով,  
Վոր շուտով  
Մեր կյանքում,  
Ցերկրորդ հնգամյակում  
Նրա արժեքավոր մորթին,  
Միսն էլ իր հերթին,  
(Վոր անհրաժեշտ է մեզ ամեն օր),  
Իրենց տեղը բռնեն պատվավոր:

ԴՊՐՈՑՈՒՄ ՓՈՔՐԻԿ ՃԱԳԱՐԱՆՈՑ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԵԼ,  
ՃԱԳԱՐԸ ՍԱԿԱՎԱՊԵՏ Ե, ԽՆԱՄՔԸ ՀԵՏԱՔՐՔԻՐ,  
ՄԻՍՆ ԵՆ ՆԱԽԱՃԱՇԻ ՍԵՂԱՆԻՆ ՎԱՅԵԼ

# ՄԱՍՆԱԿՑԵՔ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՎԱՇՏԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՍ. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Ուսման վորակը բարձրացնելու, սխտեմատիկ դիտուելթյուններ ձեռք բերելու, լավ պիտներ ու առաջադեմ աշակերտ լինելու լավագույն միջոցներից մեկը սոցիալիստական մրցումն ու հարվածայնութունն է:

Հոկտեմբերյան հեղափոխության 15-ամյակը տոնելու ձևերից մեկը դիտուելթյուններ ձեռք բերելու և զիտակցական կարգապահութուն ստեղծելու համար պայքար մղելն է:

Ահա հենց սրա համար պիտներ կազմակերպության կենտրոնական բյուրոն, կոմյերիտմիության կենտկոմի հավանությամբ հայտարարել և վաշտերի և դպրոցների համամիութենական մրցակցութուն:



Ռոստովի ընկ. Ս. Շտեռնայանի անվան տասնամյակի 3-4 խմբերի լավագույն երիտասարդները: 1. Արաչյան Յեղիսարիք, 2. Սոզոմոնյան Համաս, 3. Կոր-Արիվյան Կարապետ:

Ամեն մի պիտներական վաշտ և դպրոց այդ սոցիալիստական մրցմանը պետք է մասնակցի, ձգտի առաջին շարքերումը լինել և սահմանաձ պարզեցնելին արժանի դառնալ:

Մանկական կազմակերպության կենտրոնական բյուրոն (ՎԵԴԿՕ) առաջարկում է, վոր «դպրոցի ներսում խուժըը խմբի հետ մրցի, պիտներական ողակը ողակի հետ և ողակի մեջ ամեն աշակերտ ինքը կանկրեա պարտավորություններ վերցնի իր վրա»... Յերկրամասի ներսում ուսուցիչները պիտի մրցին ուսուցիչների հետ և խ. Մ. մեջ մարզերը յերկրամասերն ու հանրապետություններն իրար հետ:

Կենտրոնական բյուրոն առաջարկում է մրցումը հետևյալ կետերի շուրջ կատարել:

1. «Պայքարել դիտելիքներ ձեռք բերելու, ուսումնական աշխատանքը դպրոցում կազմակերպելու համար: Այդ նպատակով պետք է, վոր ամեն մի աշակերտ իմանա կուսակցության կենտկոմի այն տարվա ոգոստոսի 25-ի վորոշման մասին, պետք է նոր ծրագրերը լրիվ իրազործել, կանոնավորել թույլերին ոգնելու դործը, վերացնել բացակայութունն և ուշացումները, ուսուցումը արտագրական աշխատանքի հետ կապել, արհեստանոցներ և աշխատանքի սենյակներ կազմակերպել, կազմակերպել աշակերտների ինքնուրույն աշխատանք»:

2. «Պայքարել դիտակցական կարգապահության, դպրոցական սեփական ամրապնդման համար, — կատարել ներդպրոցական կարգ ու կանոնը, կանոնավորել աշակերտական ինքնավարության և պիտներ կազմակերպության դաստիարակչական աշխատանքը: Լրիվ ոգոստործել դասաժամը, պահպանել դպրոցի և վաշտի ունեցվածքը»:

3. «Յերիսանների հանդատի և առողջացման գործի կազմակերպում: Լրիվ կատարել կոմյերիտմիության կենտկոմի, լուսավորության և առողջապահության ժողկոմիսարիատների վորոշումները յերիտանների ծանրաբեռնումները պակասեցնելու և կարգավորելու մասին»:

4. «Պայքարել պիտներական աշխատանքը լավագույն կերպով կազմակերպելու, յերիտանների մեջ պիտներների առաջատար դերն իրապես ապահովելու համար»:

Կենտրոնական բյուրոն առաջարկում է սխտեմատիկ կերպով մրցման հաշվառք և ստուգում կատարել և հաջող փորձերը թերթերի միջոցով բոլոր վաշտերի ու դպրոցների սեփականութուն դարձնել: Կենտրոնական բյուրոն առաջարկում է ուսումնական տարվա ամեն քառորդի վերջում հաշվառքի հանրագումար անել և սահմանում է համամիութենական մրցանակները:

1. Մանկ. կոմունիստական կազմակերպության յերկրային, մարզային և հանրապետական բյուրոների համար հին բուլշեիկներին ընկերության փոխանցելի դրոշ և 3 նվեր — մարզային մանկ. տեխնիկական դրայանի, ֆիզկուլտ կայանի կահավորանք, մարզային մանկական գրահանդակ հանրական կազմակերպությունների համար սահմանվում են հետևյալ մրցանակները: Ա. «Մանուկների բարեկամ» ընկերության փոխանցելի դրոշ, Բ. ուսուցիչական մանկական տեխնիկական կայանի, Գ. փոխանցելի դրոշ, Բ. ուսուցիչական մանկական տեխնիկական կայանի կահավորանք:

Վաշտերի և դպրոցների համար սահմանվում է վեց մրցանակ. յերկու ֆիզկուլտ սենյակների կահավորանք, 2 եքսկուրսիա դեպի նորակառույցներ, շարժական կինո և վաշտի համար պիտներական զգեստների լրիվ կոմպլեկտ:

Պիոներներ, պայքարեցեք հին բուրձիկների դրոշը ստանալու համար:

Վորպես որինակ, բերում ենք համաժողովենական մրցման նախաձեռնողներից Մենժինսկու անվան դործարանի 7 ամյակի պիոների և աշակերտների պարտավորագիրը:

1. Պայքարել դասի 45 բուպեն լրիվ ոգտադործելու համար:
2. Տարվա սկզբից թույլերի հետ պարապելու խմբակներ կազմակերպել և ուժեղ աշակերտներին կցել թույլերին՝ նրանց ոգնելու համար:
3. Ուսումնական աշխատանքի ժամանակ դիմազրկութուն չստեղծել. կատարել ամեն մի աշակերտի դիտության և առաջադիմության անհատական ստուգում:
4. Պահպանել դպրոցական կաճավորանքն ու ուսումնական ձեռնարկներն ու գործիքները:
5. Պայքարել դիտակից կարգապահության համար և կարգ ու կանոնի խախտման դեմ:
6. Աշխատանք ծավալել անկազմակերպ յերեխաներին պիոներ կազմակերպություն քաշելու համար:
7. Կնքել անհատական և խմբակային սոցմրցման պայմանագրեր:
8. Կազմակերպել խմբակներ և այլն:

Հյուսիսային Կովկասի վոյ մի հայկ. 1 աստիճանի և 7 ամյա դպրոց համաժողովենական այս օրցակցությունից դուրս չպիտի մնա: Յեթե ձեր դպրոցում այդ մրցման աշխատանքները դեռ չեն սկսվել, յնգեք առաջատար, կազմակերպեցեք ձեր խումբն ու պիոներական ուղակները քաշեք մանուկների ակտիվությունը բարձրացնող այս մրցման գործին:

Աշխատանքերի ընթացքի դժվարությունների ու հաջողությունների մասին գրեք «Ուսման Հարվածային»-ին:

ՀՈՒՏՈՎ ՎԵՐՋԱՆՈՒՄ Ե 1932—33 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
 ՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍՍՄՅԱԿԸ: ՀԱՇՎԻ ԱՌԵՔ ՈՒՍՄԱՆ  
 ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԵ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՊԱՐ-  
 ԳԵՎԱՏՐԵՑԵՔ ՈՒՍՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ  
 ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

Ուրիշ և այսորվա սպեկուլյանար. նա՛ վոչ հաստափոր և վոչ ել գեր: Լավ չնայեք չեք ճանաչի, Փոխվել ե նրա պատկերը:

Լուսաստղի հետ յեղնում ե լուսաբացին, կտրում ե սայլերի ճամբաները, վոր նրան ծախի գյուղացին Բաղաբ տարվող մթերքները:

Հետո յել ցիցի պես սուս ու փուս, կուզեկուզ, Բիշ քիշ Իր գործն ե տեսնում կողսպտիչ. մեկին յերեք ե առնում— Գնողներին թալանում:

Ամեն տեղ սպեկուլյանար Զի մնում նույնը. Տեղի համեմատ, ինչպես քամեյոներ, Փոխում ե գույնը:

կրծքաբաց, ինչպես բանվորը, կոլխողային շուկա յե մտնում, Հոտոտում ե... վորտեղ հարկավոր ե, Այնտեղ ել հերթի յե կանգնում:

Հերթի մեջ ամպի պես գողգողում ե, Ցույց տալով իրեն բանվոր, Յերբե՛ք ել մի քանիսին փափսում ե. — «Սարսափելի յեն գներն այսոր»:

Յեթե կարգապահ միլիցիոները Բռնում ե դիզված ապրանքները, նա փաստաթղթեր ե հանում, Վոր ինքը «բանվոր» ե գործարանում. — «Գործարանի համար եմ գնել, Ընկեր միլիցիոներ»:

Այնքան ճարպիկ ե, արթուն  
Յեզ գայլի պես ազահն անկշտում.  
Վոչ մի տեղ չի նստում.  
Ինչպես չվող թռչուն,  
Ահաեղ ե թռչում,  
Վորտեղ գտնում ե իր համար  
Մի անկյուն տաքուկ, հարմար:

Բայց ամեն մի անկյուն  
Գրավում են խկույն  
Կոտպերատիֆն ու կոլխոզը ձուլված,  
Միասնական ճակատ կազմած՝  
Կայծակի թափով  
Գրոհ են տալիս խմբով..

Յեզ պարզ տեսնում ե նա,  
Վոր ինքն ել չի մնա,  
Բաշ ե տալիս իր որերը վերջին,  
Ինչպես մահամերձ հիվանդ,  
Վորպես վերջին սպեկուլիանտ:

## ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՌԱՅՈՆԸ

Որը շոգ ել: Արեզի կիզիչ ճառագայթների տակ պապսկվում և տապակվում եր հողը: Դոնի կանաչավուն մարզերից ու խիտ, վայրի յեղեգնուտաններից դեպի հյուսիս լայնածավալ ու սեփահող դաշտում ու տափաստաններում մուլխոտերը սփռվել եյին գրկախառն: Դաշտերի ամալուծյան մեջ յերբեմն հայտնվում եյին զինված-ձիավոր կազակների խմբերը, վորոնք դեպի Դոն եյին դիմում ու անհետանում կորագլուխ բլուրների յետեվը:

Ու անցան որեր, տարիներ, դարեր:  
Իանդազանոս Դոնի աջ ափին, Ազովի ծովից վոչ շատ հեռու, ձկնորսական շենքերը լայնացան—մեծացան:

Դոնյան խոպան տափաստաններում աշխատավոր նստակյաց կազակները բազմացան—յերկիրը բնակեցվում եր. հետզհետե, մեկը մյուսի յետեվից ծնվում ու մեծանում եյին Դոն-Ազովյան քաղաքները՝ Տազանրոզ, Ազով, Նովոչերկասկ, Նոր-Նախիջևան և Ռոստով:

\* \* \*

Հողը հուզվում եր—նրա դարավոր բունը—հանգիստը սկսել եր խանդարել հյուսիսից յեկած ուսու աշխատավոր մուծիկը:

Թագավորը դաժան եր: Թագուհին փառասեր—փողասեր: Դոնի դաշտերի հողը դեռ շատ եր, հերկողը քիչ: Իսկ Թագուհին չեր քնում—ցորեն պետք եր, դեղին վոսկի ցորեն. վոր Յեկասերիման ծախի ուրիշ յերկրներին: Դոնը մոտ եր, Ազովն արժան ճամբա: Մարդիկ պետք են հողի, գործի, արհեստի ու փողի. իսկ վոչ շատ հեռու, ծիծաղախիտ աւ կանաչավուն Դրիմում կային մարդիկ թե գործի և թե հողի ու փողի: Յեկատերինա Չ-րը կաշառեց, սիրաշահեց փողի մարդկանց—իսկ փողի ու «հոգու» մարդիկ «խրատ ու խելք» տվին հողի ու արհեստի մարդկանց գաղթել, գնալ թագուհու յերկիրը:

... Ու յեկան: Հոգնատանջ, կիսամեռ: Դոնի ափում ու ափերից ել Հյուսիս գյուղեր հիմնեցին 1779 թվին: Չալթր. Թոպաի, Մեծ Սալա, Փոքր Սալա, Նիսվիթայ, Ս. Խաչ և Նոր Նախիջևան քաղաք: Թագուհին ուրախ եր:

Հողը տնքաց, մարդը տնքաց, հողը մարդու խոփից, մարդը՝ թագուհու շղթայից:

Ու ելի անցան տարիներ: Մուլխոտերի տեղ, դաշտերը ցորենի հասկերով վոսկեզոծվեցին:

Թագավորի մի քանի սերունդներ անցան: Յեցերն ու հարստահարիչները շատացան, ուրիշի քրտինք ծծեցին... ծծեցին մինչև վոր կարգերը փոխվեցին,—խորհրդները հիմնվեցին:

\* \* \*

Ու խորհրդների կամքով, հողի և գործի մարդկանց ջանքով, լեւնինյան պատգամի կարգով—1926 թվին ծնվեց Դոնի աջ ափին, ազմկահույզ—գործարանաշեն Ռոստովին շատ մոտիկ՝ Մյասնիկյան ուայոնը:

## ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՌԱՅՈՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Կովկասում ապրող շատ մանր ազգեր, վորոնք թագավորական իշխանաւթյան շրջանում հալածվում, ճնշվում և շահագործվում եյին՝ շնորհիվ խորհրդային իշխանության սկսեցին անտեսապես ու կուլտուրապես առաջ գնալ:

Այն մանր ազգերը, վորոնք միահավաք ապրում են մեր յերկրում, կազմում են իրենց առանձին մարզերն ու ուայոնները:

Հյուսիսային Կովկասում կան մի շարք ազգային փոքրամասնությունների ուայոններ, ինչպես որինակ՝ Հայկական, Ուկրաինական, Հունական, Կարմիկների, Թաթարական, Գերմանական և այլն:



վելյան սահմանով՝ Թուզլով գետը: Այս գետերի ջրերը ուղտադործ-վում են միայն բանջարանոցների համար: Քիտերը ձմռան սառչում են 4—4 և կես ամիս:

Ռայոնի կլիման ցամաքային է: Ջերմության բարձր աստիճանն ամռանն հասնում է մինչև + 36-ի, իսկ նվազագույն սահմանը ձմռան՝ 25—30-ի: Ռայոնում փչում են հյուսիս-արեվելյան չոր քամիներ:

Ռայոնը հարուստ չէ իր բուսական և կենդանական աշխարհով: Անտառներ-թփուտներ բոլորովին չկան: Վայրի կենդանիներից յե յե փվում են աղվես, նապաստակ, վոզնի և այլն: Ռայոնում կան նաև պոնտական մկներ (սուսլիկներ), վորոնք մեծ վնաս են հասցնում գարնանացանին և առհասարակ գյուղատնտեսության: Վերջին տարիներում ուժեղ պայքար է տարվում դրանց դեմ: Թռչուններից ուայոնի դաշտերում յերևվում են՝ ճնճղուկ, կաչաղակ, ծիծեռնակ, սարյակ, սեվ աղավնի և այլն: Վորսորդությունը ուայոնում առանձնապես զարգացած չէ: Կա վորսորդների ուայոնական միություն, բաղկացած 20—25 հոգուց:

Մլասնիկյան ուայոնի ազգաբնակչության հիմնական գրագմունքը գյուղատնտեսությունն է, վորով յեվ գրագված է բնակչության 96 տոկոսը: Առանձնապես զարգացած է հացահատիկային կուլտուրաների մըշակումը: Շատ լավ վորակի յե ցորենը, վորը և հանդիսանում է արտահանման ապրանք է սերմացու: Բացի հացահատիկային կուլտուրաներից, յուղատու բույսերից մշակվում է արիվածադիկը:

Վերջին տարիներում ուայոնում զարգանում է բանջարանոցային կուլտուրաների մշակումը և ցանովի խոտերի տարածությունը: Ռայոնը հստակաբանալով մեծա՝ քաղաքային, ներկայումս ընդունում է կարևա-ամասնաբուսական բեխում:

Ռայոնի հողերի ընդհանուր տարածության (67376 հեկտար) 87,7 տոկոսը վարելահող է, 4,7 տոկոս արոտավայրեր:

Ռայոնի վարելահողերի 96 տոկոսը այս տարի գտնվում է սոցսեկտորի ոգտագործման շրջանակում:

Շնորհիվ տնտեսությունների կոլեկտիվացման, տարեց տարի ընդարձակվում է ցանքատարածությունն. այսպես, որինսով.

1926 թ.	ցանվել է	37,257	հեկտար
1927 թ.	»	45,113	»
1928 թ.	»	40,986	»
1929 թ.	»	41,027	»
1930 թ.	»	37,075	»
1931 թ.	»	35,561	»
1932 թ.	»	42,525	»

Ինչպես ցույց են տալիս վերև բերված թվերը, ցանքատարածությունն աճում է, 1930-1931 թվերի բացառությամբ, յերբ կոլեկտիվացման առաջին շրջանի սխալների հետևանքով ցանքատարածության թափն ընկնում է:

1932 թիվը կրկին ցույց է տալիս, վոր ամրապնդված կուլտեստությունները լայնացնում են իրենց ցանքերը: Այժմ գլխավոր ուշադրությունը դարձվում է բերքատվության բարձրացման վրա:

Անասնապահությանը ուայոնում, ինչպես ասինք, գերակշիռ դեր է խաղում և հիմնականում զարգանալու յե կաթնատնտեսության ուղղությամբ: Ներկայումս ուայոնն ունի մի խորհրդային սնեսուսթյուն, կաթնատնտ. թեքումով, վորն ունի 15 հազար հեկտար հող, 85 գլուխ կով և 110 վոչխար: Բացի դրանից, 1931 թվից ուայոնում կադմակերպվել են կաթնա-ապրանքային ֆերմաներ (ԿԱՖ), վորոնց թիվը ներկայումս 13 է. դրանք ունեն 1440 կով, կա նաև վոչխարների 15 ԿԱՖ, 1880 գլուխ վոչխարով: Բացի այս ԿԱՖ-երից, ուայոնի կուտնտեսությունները, կուլտնտեսականներն ու անհատականները պահում են կաթնատու կովեր: Ռայոնում զարգանում է կաթնատնտեսությունը:

Ներկայումս ուայոնի 5 գյուղերում կա 12 գյուղատնտեսական արտել, մեկ խորհ. տնտեսություն է մեկ կոմունա. վերջինս հիմնվել է 1922 թվին և իր սկզբնական շրջանում չափազանց աղքատիկ է յեղել: Կոմունան ներկայումս կազմված է 98 ընտանիքից, մոտ 400 հոգի անդամով և իր կազմակերպությամբ ու տնտեսավարություններով արինակելի յե ամբողջ յերկրամասում:

Ռայոնի 12 կուլտնտեսություններին, խորհ. տնտեսության ու կոմունային սպասարկում է ՄՏԿ-ն, վորը հիմնված է 1930 թվին և ներկայումս ունի 55 տրակտոր:

Ռայոնի արդյունաբերությունը. Մյասնիկյան ուայոնը վորպես հիմնականում գյուղատնտեսական ուայոն՝ նշանակալից արդյունագործություն չունի:

Ռայոնում բնական հարստություն համարվում է քարը, ավաղն ու կիրը:

Կա աղյուսի գործարան (Չալթր), յիրևու կոլեկտորչրադաց (Թոպաի Մ. Սալա), մեկ ցանցագործական արհեստանոց ու յեղեգի գործարան: Ընդհանրապես ուայոնի արդյունագործությունը և հարստությունը՝ դա շինանյութերն են: Բանվորների թիվն ամբողջ ուայոնում 1000-ից անցնում է:

Փող. յուսավորության ասպարեզում ուայոնը հսկայական նվաճումներ ունի 1930 թվից կիրառվում է տարբական ընդպարտուսը:

Հետեվյալ աղյուսակը ցույց է տալիս դպրոց. ցանցի լայնացման պատկերը:

Ուսումնական տարին	Դպրոցների թիվը	Ուսուցիչ	Աշակերտ	Ուսուցիչ-աճման տուկոսը	Ընդհանրականը
1926—27	9	50	2714	100	57
1927—28	10	64	2869	128	62
1928—29	12	76	2912	152	65
1929—30	13	79	2878	168	68
1930—31	14	85	3418	170	90
1931—32	16	110	3627	222	100
1932—33	16	115	3700	230	100

Այս թվերը պերճախոս ապացույց են այն բանի, վոր դպրոցի ցանցը լայնացել, ուսուցչական կազմը կրկնապատկվել և աշակերտների թիվն ավելացել է: Այդ այն ժամանակ, յերբ ուսյոնի ազգաբնակչության ընդհանուր թիվն իջնում է, վորը յերեւում է հետևյալ աղուսյակից:

1926—25043	1930—25914
1927—25696	1931—24262
1928—26596	1932—22894
1929—26958	

Այսպես ուրեմն, չնայած բնակչության բացարձակ թվի անկման, վորն է գեպ պետք է վերագրել ուսյոնի տնտեսական վերակառուցման, արտադնացուցության, կուլակության տնտեսական լիկվիդացիային և, վերջապես ուսյոնի քաղաքամերձ լինելուն: Սեւմաշ, Չենցովի և այլն գործարաններում աշխատում են հարյուրավոր մյասնիկյանցիներ: չնայած դրան՝ աշակերտների թիվն աճում է:

1931 թ. ուսյոնում կազմակերպվել է տպարան և լույս է տեսնում յետորյա «Կոմունար» թերթ:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Ցարական իշխանության ժամանակ յերկու խզճուկ հիվանդանոց և 4—5 մասնավոր բժիշկ ունեցող գյուղերն այսոր ունեն 2 գյուղական և մեկ ուսյոնական (1930 թ. գործող) շքեղ յերկկորպուս հիվանդանոցներ՝ 55 մահճակալներով:

Բժշկա-սանիտարական կազմը 40-ից անցնում է Գյուղերում կան գեղատներ, սանկայաններ և կոնսուլտացիա:

Մյասնիկյան ուսյոնը թեվակոխել է իր դոյուկցյան 7-ը տարին հսկայական նվաճումներով, նվաճումներ, վորոնք հետևյալն են լեւինյան ազգային քաղաքականության կիրառման:

**ՇՈՂԵՇԱՐԺ ՏՈՒՐԲԻՆՆԵՐ**

Ներկայումս ամենատարածված շոգեշարժ մեքենաներից մեկը շոգեշարժ տուրբինն է: Շոգեշարժ տուրբինները հետզհետե ասպարեզից դուրս են մղում մխոցավոր շոգեշարժերին և իրենք նրանց տեղը բռնում արդյունաբերության մեջ և հաղորդակցության գործում: Վերջին ժամանակներս մեծ շոգեշարժերի մեջ փոխանակ մխոցավոր շոգեշարժերի, սկսել են գործածել շոգեշարժ տուրբիններ: Գերմանիայում և Շվեյցիայում նույնիսկ շինում են շոգետուրբիններով աշխատող շոգեկառքեր:

Շոգեշարժ տուրբինների այդպիսի հաջողությունը շատ բնական է: Նախ շոգեշարժ տուրբինները մոտ յերկու անգամ ավելի ձեռնատու յին, քան շոգեմեքենաները, վորովհետեւ նրանց մեջ ավելի քիչ գոլորշի յե ծախսվում, քան շոգեմեքենաների մեջ: Հետո շոգեշարժ տուրբիններն ավելի թեթեւ են, քիչ տեղ են բռնում և նրանց հոգատարությունն ավելի պարզ է Բացի այդ, շոգեշարժ տուրբինները շատ ավելի արագ են շարժվում, դրա համար էլ նրանք արժեքավոր են մանավանդ այն դեպքում, յերբ անհրաժեշտ է մեծ արագության պտտողական շարժում ստանալ: որինակ, մեծ գինամո-մեքենաներ (գեներատորներ) շարժելու, վորոնք պատրաստում են ելեկտրական հոսանք: Միայն շնորհիվ շոգեշարժ տուրբինների, հնարավոր յեղավ ստանալ հեծանագին ելեկտրական հոսանք:

Մեզ մոտ ԽՍՀՄ-ի մեջ շոգեշարժ տուրբինների միջոցով աշխատում են Շատուրի, Կաշիրի և այլ ելեկտրակայաններ:

**ԲՐԱՆԿԻ ԱՆԻՎԸ**

Մեզանից մոտ 300 տարի առաջ մի իտալացի գիտնական Ծիովանի Բրանկ անունով, շինեց մի գործիք, վորն աշխատում էր շոգու միջոցով:

Այդ գործիքը շատ պարզ կազմութիւն ունի: Նա կազմված էր մի թիակաձոր անվից և մի փակ անոթից, վորից դուրս եր գալիս մի խողովակ: Փակ անոթի մեջ բրանկը լցնում եր ջուր և անոթը ներքևից տաքացնում: Յերբ ջուրը յիս եր գալիս, խողովակից սկսում եր դուրս գալ գոլորշին, վորի դիմաց ամրացրած եր շարժուն անիվը: Գոլորշին խփելով անվի թիակներին, պտտեցնում եր նրան: Բրանկը իր կաթսային վայելուչ տեսք տալու համար շինել եր նրան մարդու իրանի ձևով: Բրանկի գործիքն ամենապարզ շոգեշարժ տուրբինի մոդելն է:

### ԼԱՎԱԼԻ ՏՈՒՐԲԻՆԸ

Բրանկի անիվը, ինչպես տեսանք, մի գործիք—խաղալիք է, վորը համարյա վոչնչով չեր տարբերվում ջրանվից: Բայց Բրանկն իւր այդ գործիքով տվեց գոլորշու միջոցով անմիջապես անիվը պտտեցնելու գաղափարը, վորը նրանից 250 տարի հետո փառավոր կերպով կիրառեց կյանքում շվեդացի ինժեներ Լավալը: Լավալը կառուցեց մի սեքինա — շոգեշարժ տուրբին, վորը մի քանի տասնյակ ձիու ուժ ունի: Լավալի տուրբինը կազմված է աշխատող գլանի վրա ամրացված յեղրներին թիյեր ունեցող անվից վորի թիյերը դանազանվում են Բրանկի անվի թիյերից նրանով, վոր առանձին ձևով են թեքված. կաթսայում առաջացած գոլորշին առանձին խողովակներով ուղղվում են դեպի թիյերը և պտտեցնում անիվը: Բրանկի խողովակը, վորից դուրս է գալիս գոլորշին, ուղիղ ձևով ունի, իսկ Լավալի խողովակները կոնաձևով են, լայնանում են դեպի անիվը. դա նրա համար է արված, վոր կաթսայի միջի գոլորշու ճնշումը ինչքան էլ մեծ չլինի, յեթե խողովակները ուղիղ են, գոլորշին դուրս է գալիս քուլաներով, իսկ յեթե խողովակները կոնաձևով են (ինչպես Լավալին) գոլորշին մեծ ճնշման ժամանակ դուրս է գալիս հավասար շիթերով: Իսկ այդ ձևով դուրս յեկող գոլորշու ուժը լինում է շատ ավելի ուժեղ, վորը հաղորդելով թիակներին, անիվը պտտեցնում է շատ արագ 10000—30000 պտույտ մի վարկյանում:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԼԱՎԱԼԻ ՏՈՒՐԲԻՆԻ ԱՍԵՆԱՊԱՐՉ ՍՈՂԵԼԸ


Վորպեսզի դու լավ ծանոթանաս Լավալի շոգեշարժ տուրբինի կազմութիւնը և իմանաս, թե ինչպես է նա աշխատում, պատրաստիր նրա տուրբինի ամենապարզ մոդելը:

Վերցրու մի յերկաթե թիթեղ և նրա վրա կարկինի ոգնութիւնով գծիր միևնույն կենտրոնն ունեցող յերկու շրջագծեր, մեկը 3 սմ., իսկ մյուսը, 4 սմ., շառավիղով: Մեծ շրջանագծով կարիր շրջան և բաժանիր նրան 32 հավասար մասերի: Շրջանի ծայրը մասերի բաժա-

նող գծերով կարիր մինչև հետեվյալ շրջագիծը: Ստացված թիթեղները ծուր կրտսգլանաձևով այնպես, վոր բոլորի ուռուցիկ մասերը լինեն միևնույն կողմը (տես նկար 1) Անվի կենտրոնում մեխով ձակիր, մեխը հասցրու մինչև կեսը և դողիր: Այդպիսով տուրբինի անիվը պատրաստ է:

Այժմ պետք է վատրաստել անվի պատվանդանը: Դրա համար վերցրու յերկու հարթած փայտի կտորներ 6 սմ. յերկար և 2—3 1/2 սմ. հաստ թիւղ, վորոնք դեմ առ դեմ ամրացրու մի տախտակի վրա, վորի չափը լինի 6—10 սմ.: Այդպիսով պատվանդանը նույնպես պատրաստ է:

Այժմ պետք է անիվը ամրացնել պատվանդանի վրա: Դրա համար պատրաստիր յերկու յերկաթե թիթեղներ 2x3 սմ. և 2x3 սմ. չափերով և մանր մեխերով նրանց ծայրն ամրացրու պատվանդանի յերկու նեցուկների վերին ծայրերին ներսի կողմից: Նեցուկների



ծայրերից 6,5 սանտիմետր վերեւ յերկու թիթեղների վրա դեմ առ դեմ ձակեր բայ արա այնպիսի մեծութիւն, վոր անվի առանցքն ազատ պտտվի նրա մեջ: Կարճ թիթեղի վերեւի ծայրից դեպի ներքեւ մինչև անցքը կտրվածք բաց արա, վորտեղից անվի առանցքի գլուխ ունեցող ծայրը մտցրու ձակը: Առանցքի մյուս (սուր) ծայրը մտցրու յերկար թիթեղի անցքը և թիթեղի յերկար ծայրը ծուր դեպի դրսի կողմը, վորը փակի առանցքի սուր ծայրը և արգելք հանդիպանա նրան ազատ այն կողմը տեղափոխվելու (տես նկար 2): Վորպեսի արանցքը չկարողանա տեղափոխվել և հակառակ գլուխ ունեցող կողմը, անվից մինչև նեցուկը առանցքը փաթաթիր կակուղ յերկաթե լարով, վորը կծառայի վորպես արգելակ առանցքն այդ կողմը: շարժվելու: Այսպիսով շոգեշարժ տուրբինի մոդելը պատրաստ է (տես նկ. 3)

Այժմ պետք է պատրաստել կաթսան: Իրա համար վերցրու նավթի համար պատրաստած յերկու լիտրանոց ծորակավոր մի թիթեղյա աման և ծորակի ծայրին թեք դրությամբ (30—45° անկյունով) ամբարցրու մի բարակ ապակյա կամ այլ խողովակ: Ամանի մյուս անցքով մինչև նրա <sup>3</sup>/<sub>4</sub>-ը լցրու ջրով և տաքացրու պրիմուսի վրա կամ այլ ձեւով: Յերբ ջուրը սկսում է յեռալ, ամանի անցքը (վորտեղից ջուր ելելը լցրել) ամուր փակելը և խողովակով դուրս յեկող գոլորշին ուղղիւր դեպի տուրբինի անվի թիակները: Տուրբինը կսկսի աշխատել: Վորպեսզի քո պատրաստած տուրբինին կարողանաս և աշխատանք կատարել ապա, կարող ես անվի առանցքի դուրս ունեցող ծայրին ամբարցնել մի ուրիշ սղոցավոր յեզրներով շրջանակ—սղոց (հեշտությամբ ինքզ կարող ես պատրաստել յերկաթյա թիթեղից), վորը տուրբինն աշխատելիս արագ կպտտի և կարող է աշխատանք կատարել — թուղթ կտրել, ինչպես ցույց է տրված նկար 4-ի մեջ:

Այժմ յերբ արդեն աշխատում է քո պատրաստած տուրբինը, ցույց տուր նրան քո ընկերներին թե դպրոցում, թե պիոներ ակումբում և թե խրճիթ ընթերցարաններում: Ծանոթացրու նրանց տուրբինի կազմութունը և ամեն կերպ աշխատիլը, վոր նրանց մեջ ևս առաջ դա ցանկութուն մեքենաների մոդելներ պատրաստելու: Հնարավոր դեպքում կազմակերպեցիք պատանի տեխնիկների խմբակ և միասին աշխատեցեք: Կուրկտիվ կերպով և զանազան նյութեր և գործիքներ ձարելը և աշխատանք կատարելն ավելի հեշտ է:

## ԹԵՑԱՄԱՆՈՒՄ ԹԱԳՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲԸ ՅԵՎ ՆՐԱ ՅԵՂԲԱՅՐՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱԿԻՑՆԵՐԸ

ձեզնից ամեն մեկը նկատած կլինի, վոր վառարանի կամ պրիմուսի վրա դրված թեյամանի կափարիչը վեր ու վայր է ցատկոտում իր տեղում: Կարծես մեկը թագնված թեյամանում անընդհատ շարժում է կափարիչը:

Ի՞նչ ու՛՛՛՛՛՛ է այդ, վորտեղից առաջացավ այդ դժգոհ ապստամբը, վոր մինչ այդ թագնված հանդիստ նստած էր թեյամանով ջրի մեջ, իսկ այժմ աշխատում է կափարիչը գեն գցել և դուրս փախել թեյամանից:

Այդպիսի հարցերին ձեզնից շատերը հավանորեն անտարբեր կերպով կպատասխանեն.— Ի՞նչ կա այդտեղ դարմանալու, այդ գոլորշին է,

ամենահասարակ ջրի գոլորշին, վորի մասին խոսել նույն իսկ չարժի: Այդպես է արդյոք: Միթե իսկապես այդքան չնչին բան է ջրի գոլորշին: Իհարկե վո՛չ: Չգարմանաք, յեթե ասեմ, վոր չլինեք այդ չնչին բանը», չեյինք ունենա շոգեկառքերն ու շոգենավերը, չեյին լինի ժամանակակից գործարաններն ու ֆաբրիկները, հետեվապես, ժամանակակից արդյունաբերութունը և մեր ամբողջ կյանքը կլինեք բոլորովին այլ, քան այժմ է:

Չգարմանաք, վոր հենց այդ «ապստամբը», վորը նստած ձեր թեյամանում, ստիպում է ազմկել նրա կափարիչին, հարազատ յեղբայրն է այն «կախարդական» ուժի, վորը յերկաթուղիների վրայով մեկ անգամից շարժում է կես միլիոն փութ ծանրութուն, մեկ ժամում տասնյակ կիլոմետր տարածութուն անցնելով: Նա հարազատ յեղբայրն է նայել այն ուժի, վորը մեկ մայր ցամաքից մյուսն, ովկիանոսների և ծովերի վրայով տեղափոխում է հսկայական շոգենավեր—«լողացող քաղաքներ», վորոնց ամեն մեկի մեջ 10 հազար մարդ է լինում: Հապա գործարանների և ֆաբրիկների բազմաթիվ շարժիչները: Չե՛ վոր նրանք ևս ազգակիցներն են թեյամանում թագնված «ապստամբի»: Նրանց մեջ յեղած դանազանութունը միայն նրանումն է, վոր այստեղ, թեյամանում «ապստամբն» ազատ շարժվում է իր կամքին, մարդը դեռ ևս իր ուշադրութունը չի դարձրել նրա վրա և նա չիմանալով իր ուժը ինչի վրա գործադրել՝ զբաղվում է բոլորովին անողու աշխատանքով— թեյամանի կափարիչը վայր ու վեր շարժելով: Իսկ շոգեկառքերի և ովկիանոսային շոգենավերի մեջ մարդը գոլորշուն ազատ չի թողնում իր կամքին: Նա բանտարկել է նրան ամուր մետաղյա կաթսաններում և գլաններում և ստիպում է նրան աշխատել մարդու համար: Յե՛վ այդ «ապստամբը» համեմատաբար պարզ ձևով շարժում է շոգեկառքերի անիվները և շոգենավերի հսկայական պտուտակները:

### ԻՆՉՈՒ ՅԵ ԱՊՍՏԱՄԲՈՒՄ ԳՈԼՈՐՇԻՆ

Ի՛նք դիտեք, վոր ջերմութունից մարմինները լայնանում են: Ջուրը նույնպես մարմին է, այն էլ հեղուկ մարմին, իսկ հեղուկ մարմիններն ավելի յեն լայնանում, մանավանդ, յերբ նրանք գազային վիճակ են ընդունում:

Յերբ մենք թեյամանով ջուրը տաքացնում ենք, ջուրը տաքանալով սկսում է լայնանալ, իսկ 100°-ի ժամանակ սկսում է գազային վիճակ ընդունել: Ջրի կաթիլները զգալի դառնալով իրանց ծավալը մեծացնում են մոտ 1700 անգամ: Հետեվապես թեյամանի միջի տարածութունը, վոր հերիք էր անում ջրի համար՝ բոլորովին հերիք չի անում գոլորշու համար և սեղմված գոլորշին սկսում է ըմբոստանալ, «ապստամբել» և ճնշել թեյամանի պատերին: Իսկ վորովհետև թեյամանի

պատերն ամուր են, գոլորշին բարձրացնում է թեյամանի կափարիչն և դուրս փախչում: Գոլորշու մի մասը դուրս գալուց հետո, թեյամանի ներսում ճնշումը փոքրանում է և կափարիչն իր ծանրութունից իջնում է ցածր: Բայց վորովհետև շարունակ նոր գոլորշիներ են առաջ գալիս, վորոնք նույնպես ճնշված լինելով բարձրացնում են կափարիչը և դուրս փախչում, դրա համար ել քանի դեռ թեյամանը կրակի վրա չի դրված: Թեյամանի կափարիչը շարունակ վեր ու վար է ցատկոտում: Իսկ յեթե թեյամանի կափարիչը շատ ամուր փակված լիներ, այդ դեպքում գոլորշիները հավաքվելով այնպիսի ուժով կճնշեյին թեյամանի պատերի վրա, վոր թեյամանը ջարդ ու փշուր կլիներ: Այդպիսի դեպքեր յերբեմն պատահում են գործարաններում, յերբ մեքենավարի անըզ-պուշության պատճառով կաթսայի մեջ հավաքված «ապստամբ» գոլորշիները մեծ ուժով ճնշում են գործ դնում կաթսայի պատերի վրա և պայթեցնում նույն իսկ շատ հասա պատեր ունեցող կաթսան:


### ՇՈՒԿԵՔԵՆԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Վերջերս մի ծայրը փակ մետաղե խողովակ, որինակ՝ հրացանի գատարկ փամփուշտը: Լցրեք նրա մեջ մի քիչ ջուր և ծայրն ամուր փակեցեք խցանով: Այժմ խողովակը թեք դրուեթյամբ ամրացրեք հենարանի վրա և տակից սպիրտային լապտերով տաքացրեք: Մեկ-յիսկուս րոպեյից ջուրը կյեռա և խցանն աղմուկով կթռչի առաջ: Այսպիսով ստացանք փոքրիկ «գոլորշով թնդանութ», վորի մեջ գոլորշին վոչ թե անպետք ու քանդիչ աշխատանք կատարեց, այլ կատարեց այն աշխատանքը, ինչ վոր մենք առաջուց նպատակադրել եյինք՝ առաջ թոցնել խցանը: Այսինքն՝ մենք սանձահարեցինք գոլորշուն:

Հենց այդպիսի շոգեթնդանութները կազմում են ամենապարզ շոգե-մեքենաների սկզբունքը: Միայն տեխնիկայի մեջ խողովակը կոչվում է գլան, իսկ խցանը՝ մխոց: Յեվ հետո միայն շինում են այնպես, վոր նա վոչ թե բոլորովին թոշում է գլանից՝ ինչպես մեր խցանը, այլ դե-անի մի ծայրից շարժվում է մյուսը, իսկ հետո այս կամ այն հար-մարույթով նորից վերադառնում հետ:

ԿՍՐԳԱՎՈՐԵՔ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԵՆՑԱԿԸ  
ՈՒԺԵՂԱՑՐԵՔ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ՈՒՍՈՒՄԸ

### ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍԵԼ ՏՈՆԱԿԱՆ ԼԱՊՏԵՐ



### ՍՈՆԳՈԼՖՅԵՐ ԽԱՂԸ

Ունենալով յերկու ողապարիկ և մոնգոլֆյեր (տես «Ուսման-Հար-վածային Ժուրնալ-գասադիքը» № 3 յերես 62—65), կարելի չի կազ-մակերպել հետաքրքիր խաղ: Ամենից առաջ պետք է պատրաստել յեր-կու հատ ողապարիկ: Բացի ողապարիկներից, խաղի համար պետք է ունենալ յերկու բահ, յերկու տուփ լուցկի, յերկու զանազան գույնի, որինակ սպիտակ ու կարմիր զրոշակներ, մի ժամացույց, սուլիչ, սո-սինձ, անպետք (վառելու համար) թղթի կտորներ և տաշեղ:

Սաղի հաջողությունը պահանջում է պարզ ու խաղաղ յեղանակ. ուժեղ քամին խանգարում է խաղին: Սաղը պետք է կազմակերպել բաց դաշտում կամ մարգագետնում: Յերեխաները 20—30 հոգի, կազմ-կերպված դուրս են դալիս դաշտ կամ մարգագետին: Սմբի դուլիք կանգ-նում է շեկավարը, խմբավարը կամ խաղի ընթացքին ծանոթ մեծ յերեխաներից մեկը:

Ինչպես կազմակերպել խաղը: Դաշտ դուրս գալուց հետո, ամբողջ խումբը, ղեկավարի ոգնութեամբ ընտրում է յերեք հոգուց բաղկացած շտաբ, ապա մնացյալ յերեսաները բաժանվում են յերկու մասի, յերկու խմբի: Ամեն մի խումբ ունենալու յե իր նշանը, որինակ՝ կարմիր ու սպիտակ, կպցրած թևերի վրա: Խմբերն ել իրանցից ընտրում են 3—5 հոգուց բաղկացած ողակ: Ողակի գլուխ կանգնելու յե մի ընկեր՝ ողակավար:

Ղեկավարը շտաբի հետ միասին ընտրում է իրեն համար բաց, հարմար տեղ՝ դիտելու խաղի ընթացքը: Ողակներն ողակավարի ղեկավարութեամբ ընտրում են գնդակը (ողակարիկը) բաց թողնելու տեղ: Ողակից մի յերկու հագի փոս են փորում խարույկի համար, մյուսները խարույկ վառելու նյութ (թուղթ, չոր տերևներ և այլն) են հավաքում, խարույկի տեղն ու վառելիքը պատրաստելուց հետո, ուշադրութեամբ քննում են—արդյոք ողակարիկը փչացած չէ: Յերեք մի վորեն անցք կա, զգուշութեամբ սոսնձի ոգնութեամբ թուղթ են կպցնում, անցքը փակում: Այս բոլորից հետո ողակավարը բարձրացնելով ձեռքի գրոշակը, տալիս է առջին աղանշանը, վոր նշանակում է «վառել խարույկը»: Հետո հետևում է յերկրորդ աղանշանը, «ողակարիկը լցված է տաքացած ողով, պատրաստ է բաց թողնելու»: Մինչ այդ՝ յերկու խմբերը պատրաստ են ողակարիկները բռնելու և սպասում են ղեկավարի սուլիչի ձայնին, վորից հետո յուրաքանչյուր խումբ աշխատում է բռնել հակառակ խմբի ողակարիկը: Խաղի ժամանակ, գնդակը բռնելիս՝ չպետք է իրար հրել: Ողակարիկը չփչացնել. բռնելուց հետո իսկույն հանձնել շտաբին: Հաղթող հաշվում է այն խումբը, վորը շուտ է բռնում և առանց փչացնելու ողակարիկը հանձնում շտաբին:

Յեթե յերկու խումբն ել միևնույն ժամանակ են բռնում ողակարիկը, նշանակում է հաղթվող չկա, իրար համագոր են: Ողակավարները չպետք է մոռանան ժամանակին ողակարիկը բաց թողնելուց հետո զգուշութեամբ հանգցնել խարույկը:

Ղեկավարը շտաբի հետ միասին, ժամացույցը ու սուլիչը ձեռքին ամբողջ ժամանակ հետևում է խաղի ընթացքին ու հայտնում հետևանքը: Ղեկավարն ու շտաբը գնահատական տալիս՝ ի նկատի յեն սոսնում թե վոր խումբը կազմակերպված եր գործում. արդյոք ժամանակին սկսեցին խաղը՝ խումբը ժամանակին ու հաջող բաց թողեց ողակարիկը. վերջինս բռնելիս իրար չէյին հրհրում. արդյոք ողակարիկը բռնելիս՝ չեն փչացրել և այլն:

Այս բոլորը դիտելուց ու հետևելուց հետո, խմբավորը (ղեկավարը) տալիս է ընդհանուր գնահատականը:

Խաղի վերջը: Խաղը վերջանում է, յերեք ղեկավարը տալիս է յերկու սուլուց ու հայտնում խաղի հետևանքը: Հաղթող խումբը, բացի իր

ողակարիկից ու դրոշից, ստանում է հակառակորդի դրոշն ու ողակարիկը և կազմակերպված վերագառնում են տուն:


Ամբողջ կրեկախվել պետք է աչքի ընկնի իր կազմակերպվածութեամբ:

## ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ, ԽԱՂԵՐ ՅԵՎ ԶՎԱՐՋԱԼԻՔՆԵՐ

ԹՂԹԵ ՄԱՐԴ, ՎՈՐ ՑՈՒՅՑ Ե ՏԱԼԻՍ ԵԼԵԿՏՐՈԿԱՆ ԼԻՑԻԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ստվարաթղթից մկրատով կտրեցեք մի մարդու պատկեր. ծխախոտի թղթից պատրաստած թևերը կնոպկանների միջոցով ամրացրեք ուսերին: Կնոպկաններով ծակած անցքերը մի քիչ մեծացրեք, վոր թեկերը դուրաշարժ լինեն: Մի բարակ մետաքսե թելով գլխից կապած կախարեք նրան պատվանդանի վրա (տես նկ):

Այժմ, յեթե մոտեցնեք մահուգով շինած սանրը կամ մի այլ ելեկտրականացած մարմին, թղթե մարդն իսկույն կալարդի իր թեկերը, ցույց տալով ելեկտրական լիցքի ներկայութեանը մարմնի մեջ:



Նկ. № 1.


ԱՆԿԵՆԴԱՆ ԹԻԹԵՆԸ ԾԱՂԿԻՑ ՀՅՈՒԹ Ե ՀԱՎԱՔՈՒՄ

Սա մի հետաքրքիր ֆոկլոր է, հեշտութեամբ կարելի յե պատրաստել և ցույց տալ ընկերներին:

Պատրաստիր այսպիսի վերցրու մի հասարակ մաքրած թանաքաման և խցանով փակիր բերանը. ճարիր մի պղնձյա լար 2 սմ յերկարութեամբ և ծոիր ծնկաձև՝ մի ծունկը յերկար, մյուսը կարճ: Կարճ ծնկի ծայրը ծոիր ողակաձև, իսկ յերկար ծնկի ծայրը մոցրու թանաքամանի խցանի մեջ: Այսպիսով պատվանդանը պատրաստ է:

Այժմ յեթե ունես ամուր պատրաստած թիթեանների կրեկցիա. ընտրիր մի գեղեցիկ թիթեա, իսկ յեթե չունես՝ ճարիր ընկերներեցդ կամ դպրոցից. զգուշութեամբ հանիր գնդասեղը և անցքից անցրու մի 10 սմ յերկարութեան յետաքսյա թել: Վորպեսզի թելը դուրս չգա, թելի մի ծայրը գնդակին կապիր, իսկ մյուս ծայրը ամրացրու քո պատրաստած պատվանդանի մետաղյա լարի ողակից:

Այժմ պետք է կենդանացնել թիթեռին: Դրա համար վերցրու մի երոնիտից պատրաստած սանլ, ծայրին ամրացրու մի չորացած ծաղիկ (դարձյալ թո կոլեկցիաներից կարող ես վերցնել): Սանլը մահուողով




Նկ. № 2.

լավ շփելուց հետո, մոտեցրու թիթեռին: Թիթեռն իսկույն կենդանանում է և թռչում դեպի սանլը և կպչելով սանլին, մի քիչ հետո նորից փախչում, կարծես թե ծաղիկը հյուսթ վերցրեց ու թռավ: Սրանից հետո ինչքան ել մոտեցնես սանլը, թիթեռը չի մոտենա ծաղիկին: Իսկ յեթե վերցնեք մի ապակյա խողովակ և լավ չորացնելուց հետո թղթով ամուր շփեք և մոտեցնեք թիթեռին, թիթեռը մոտենում է (լավ սպա վորութուն կթողնի, յեթե ապակյա խողովակի ծայրին նույնպես ամրացնենք ծաղիկը): Այս ֆոկուսի բացատրութունը դժվար չէ տալ, յեթե ծանոթ եք հլեկտրականության տարրական հասկութուններին: Իսկ յեթե ծանոթ չեք, դիմեցեք ձեր ուսուցչին և նա ձեզ կբացատրի: Կարող եք դա՛նել նաև Հյուսիսային Կովկասի հայկ. դպրոցների համար հրատարակած IV խմբի բնագիտության դասագրքում:

**ՄԱԳՆԻՍՏԱԿԱՆ ԿՐԿԵՍ**

Ամենից առաջ պետք է սովորաթղթից կրկեսի շենքը պատրաստել: Դիտելով նկարը, դուք կարող եք այն հեշտությամբ պատրաստել բեմի ներքևից կապեցեք մի բարակ թել, իսկ բեմի հետևը ամրացրեք մի պայտաձև մագնիս, ինչպես ցույց է տրված նկարի վրա:

Այժմ թղթից պատրաստեցեք դերասաններ, այնպես, վոր նրանք զանազան ձևեր ընդունեն իրենց դերասանական ընդունակութունների համեմատ. դերասանների յերկարությունը հովասար պետք է լինի ասեղի յերկարությանը, վորը կնքամոմով պետք է կպցնել նրանց հետևի կողմից:



Նկ. № 3.

Այժմ յեթե ձեր պատրաստած պարող դերասաններին կանգնեցնեք «պարանի» վրա, նրանք վայր չեն ընկնի: Իսկ յեթե «պարանը» թիթեռ կերպով շարժեք, նրանք կսկսեն պարել, ցատկոտել, վորպես կենդանի պարողներ, առանց կորցնելու իրենց հավասարակշռութունը:


**ԹՂԹԵ ՆԱՎԱԿԸ, ՎՈՐ ԼՈՂՈՒՄ Ե ՁԵՐ ՈՒՋԱԾ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

Վերցրու մի սովորական ասեղ և մագնիսով շփել նրան մի քանի անգամ մինևույն ուղղությամբ: Բո ասեղը մագնիսանում է ընդունակ է դառնում մանր յերկաթե իրեր ձգելու: Այժմ թղթից շինիր մի նավակ և նրա ծալքերում մոցրու թո ասեղը, այնպես, վոր նա չերևա: Վերցրու մի մեծ ամանով ջուր և բաց թող թո նավակը նրա վրա, վոր լողա:

Այժմ մագնիսը բռնիր և պարզիր դեպի նավակը (հակառակ բե վեռով): Ձեռքը վոր կողմը շարժես՝ նավակն ել այն կողմը կշարժվի: Յեթե մագնիսը այդպես բռնես ձեռումդ, վոր դրոշները չնկատվեն, դու նրանց զարմանքը կշարժես, թե ինչպես ձեռիդ շարժումով գեկավարում ես նավի ընթացքը:

**ԳՈՒՏԱՊԵՐՉԻՑ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲԱԴԻԿԸ ԿՏՅՈՒՄ Ե ՀԱՅԻ ՓՇԵՐԱՆԻԸ**

Յեթե ունես գուտապերչից պատրաստած բադիկ (ծախում են վորպես խաղալիք), ամրացրու նրա կտուցի մեջ մի ասեղի կտոր և բաց թող նրան ջրով ամանի մեջ, վոր լողա:



Նկ. № 4.

Յեթե մի մագնիսացած պողպատի ձողի ծայրին (կարող ես ինքդ մագնիսացնել) ամրացնես հացի մի փշրանք և յերկարացնես բադիկին, բադիկն արագ լողալով կմոտենա հացը կտցելու:

**ՅԵՐԿԱԹԵ ԲՁԵՉԸ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ Ե ԿԱՐԴԱԼ**

Փայտից պատրաստիր 60 սմ կողմեր ունեցող մի քառակուսի շրջանակ: Մեջը ամրացրու սպիտակ թուղթ, վորի վրա գրված լինի հայերեն այբուբենը: Շրջանակը ամրացրու սեղանի վրա ուղղահայաց դիրքով, այնպես, վոր հեռվից նայողները պարզ կերպով կարողանան տեսնել տառերը:

Այժմ յերկաթե լարից պատրաստիւր մի բղեղ: Թեւերը շինիր թըղ-  
թից և գույնզգույն ներկիր վորպես՝ մայրսյան բղեղը:

Ընկերներինցդ մեկին, նախորոք պայմանավորվելով հետը, թափ  
կացրու տախտակի հետևը՝ մագնիսը ձեռին:

Ամեն ինչ պատրաստ ե: Այժմ կարող ես ցույց տալ ընկերներիդ,  
թե ինչպես քո բղեղը գիտուն ե, հասկանում և մարդկային լեզու և  
կարողանում և կարողալ:


Իրա համար բղեղը հանդիսականներին ցույց տալուց հետո, դը-  
նում ես տախտակի վրա: Հանդիսականները պատվիրում են զանա-  
զան բառեր, իսկ բղեղը հանդարտ շարժվելով տախտակի վրա գտնում  
և այն տառերը, վորոնք անհրաժեշտ են բառ կարգալու համար:

Հանդիսականները սկզբում մեծ զարմանքի մեջ են լինում, բայց  
հետո հասկանում են բանի էությունը, յերբ նկատում են տախ-  
տակի հետևում թագնված ընկերոջդ, վոր մագնիսը շարժելով ցանկալի  
ուղղությամբ՝ իր հետևից շարժում և բղեղը:

Յեթե տառերի փոխարեն տախտակի վրա թվեր գրված լինեն,  
քո բղեղը կարող և հաշիվներ կատարել, որինակ բազմապատկման աղ-  
յուսակը ցույց տալ:

#### ԿԱՏՈՒՆ, ՎՈՐՊԵՍ ԵՂԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ

Կղարմանաք յերևի, թե ինչպես կարող և կատուն ելեկտրական  
մեքենա լինել: Յերեվակայեցեք կարող և և բավական լավ: Այ, հիմա  
ձեզ բացատրեմ, թե ինչպես այդ կարելի յի անել:



Նկ. № 5.

Ամենից առաջ ասեմ, վոր ելեկտրական մեքենա կարելի յի դար-  
ձնել միայն բարեսիրտ և հանգիստ բնավորությամբ, խիտ մազեր ու-  
նեցող և իր մուշտակը մաքուր պահող կատվին:

Յերբ ձեր կատուն վառարանի մոտ պտուկած տաքանում ե, նրա  
բուրդը միանգամայն չոր և, վերցրեք նրան ձախ ձեռքի վրա, այնպես,  
վոր հենված լինի ձեր ափի վրա: Այդ դրությամբ նա վոչ մի անա-  
խորժություն չի զգում: Այդ ձևով կատվին բռնելով, աջ ձեռքի ափով  
ել արագ արագ գլխից դեպի պոչը շոյեցեք:

Իուք կզգաք ծակծկոց միևնույն ժամանակ և այն ձեռի վրա,  
վորով շոյում եք և այն ձեռքի վրա, վոր բռնել ենք կատվին: Այդ  
ծակծկոցների հետ միասին ձեր շոյող ձեռի տակ լսում եք և թեթև ճաք-  
ճքոցներ: Իսկ յեթե մթության մեջ ե կատարվում այդ դործողությու-  
նը, կնկատեք նաև փոքրիկ կայծեր: Այդ բոլորն իսկական ելեկտրա-  
կան յերևույթներ են: Կատվի բուրդը չոր ափով շոյելիս ելեկտրակա-  
նանում և և հետո առաջ ե գալիս յերկու տեսակ ելեկտրականություն:  
Մի տեսակը կատվի բրդի վրա, մյուսը շոյող ձեռքի վրա: Կատվի բրդի  
վրա առաջացող ելեկտրականությունը անցնում և հենարանի տեղ ծա-  
ռայող ձախ ձեռին: Այդպիսով ձեր յերկու ձեռներն ել ելեկտրականա-  
նում են և տարբեր սեռի ելեկտրականությամբ, վորոնք միանում են  
ձեր մարմնի միջոցով: Յեվ դուք զգում եք բավական զգալի «ելեկտրական  
հարվածներ»: Իրանով և բացատրվում այն ծակծկոցները, վոր դուք  
զգում եք, այն ճաքճքոցները, վոր դուք լսում եք և այն կայծիկ-  
ները, վոր դուք տեսնում եք:

Նման փորձերը շատ հաջող ե լինում մանավանդ ձմեռը, տաք  
սենյակում, վառարանի մոտ:

Այդպիսի փորձերը շատ և կատարել դեռ իր յերեխայության  
ժամանակ ելեկտրիֆիկացիայի պիտներ, Ամերիկայի նշանավոր հնարա-  
գիտ Եդիսոնը:

Փորձեցեք դուք ևս կատարել:

ԴԱՍՍՄԻՋՈՑՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՔ ՈՒՐԱԽ  
ԽԱՂԵՐ, ԶՎԱՐՃԱԼԻՔՆԵՐ, ՅԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐ

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԽԱՂԵՐ ՅԵՎ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1.

Յերկրորդ հերթի պարապող աշակերանները գրատախտակի վրա նկարեցին վեցանիշ թիվը հնգանիշ թիվով բազմապատկման գործողության կիսաջինջ հետքեր, վորը հետևյալ պատկերն էր ներկայացնում:

```

xxxxxx
xxxxxx
-----
x5x64xx
1932336
x2xx56x
x7x7xxx
-----
xxx8x8x
    
```

Վերականգնեցեք թիվերը և պատասխանը գտեք:


2.

Աշակերտը խնդիր լուծելիս մի թիվ պետք է բաժաներ 2-ի վրա և մնացորդին պիտի ավելացներ 3: Սխալմամբ նա փոխանակ բաժանելու, բազմապատկեց 2-ով և ստացածից հանեց 3: Չնայած այդ սըխալ գործողություններին, նա ստացավ ուղիղ պատասխան: Իմանալ թե բազմապատկելին ինչ թիվ էր:

3.

Ի՞նչպես բաժանել

Ռուդոլֆյան ճշգրտության հոդամասի վրա տնկված են 7 տանձենի՝ հետևյալ կարգով:



Ամբողջ հողամասը յերեք ուղիղ գծերով պետք է բաժանել այնպիսի 7 մասերի, վոր ամեն մեկի մեջ սեկ տանձենի լինի:

Ի՞նչպես անել այդ:

4.

Սուրբիկի պարտեզն է մեծ, թե՛ Ռուբիկի

Սուրբիկը և Ռուբիկը հարևաններ էին: Նրանք յերկուսն էլ զընում էին դպրոց: Ուսուցիչը առջարկեց նրանց իրենց բակում մի մի պարտեզ շինել: Սուրբիկը շինեց մի պարտեզ քառակ. սի ձևով, վորի ցանկապատի յերկարությունն այնքան մետր էր, վորքան քառակուսի մետր էր տարածությունը: Իսկ Սուրբիկը շինեց մի պարտեզ ուղղանկյունու ձևով, վորի ցանկապատի յերկարությունը նույնպես այնքան մետր էր, վորքան քառակուսի մետր տարածությունը: Իմանալ, Սուրբիկի պարտեզն էր մեծ տարածություն բունում, թե՛ Ռուբիկի:

5.

Չեք սիրած թվանոս՞ք

Չեղնից յուրաքանչյուրը անկասկած թվանշաններից վորեւ մեկը ավելի յե սիրում: Ուզո՞ւմ եք իմանամ, վորն է ձեր այդ սիրած թվանշանը: Այս ըոպելիս: Բազմապատկեցեք նրան թվանշաններից ամենամեծով, այսինքն 9-ով: Իսկ այժմ ձեր այդ ստացած թիվով բազմապատկեցեք 12345679 թիվը և դուք կստանաք ձեր սիրած թվանշանից միանգամից 9 հատ:

Ասեք տեսնեմ, իմացո՞ւմ, թե՛ վո՞չ:

6.

Ինչպե՞ս էլի կողպում դուրս


Յերեք աշակերտ պարում էին մի սենյակում: Նրանք յերեքն էլ սովորում էին տարբեր դպրոցներում և տարբեր ժամանակ էլին զնում դալիս առև: Նրանց բացակայության ժամանակ սենյակի դուռը կողպած էր լինում միանգամից յերեք տարբեր կողպեքներով, վորոնց բանալիները տարբեր էին և գտնվում էին ամեն մեկի մոտ մեկ-մեկ: Չնայած վոր տարբեր ժամանակ էլին տուն գալիս, բայց և այնպես կարողանում էին իրենց բանալիով դուռը բաց անել և ներս մտնել առանց ընկերոջ սպասելու: Իմանալ վո՞նց էլին կողպում դուրս:

7.

Ի՞նչպես լաբեց ժամացույցը

Մի մարդ մոռացավ յերեկոյան լաբել իր պատի ժամացույցը և առավոտյան նկատեց, վոր կանգնել է: Նա փորձեց լաբել բայց ժամանակը չգիտեր, ինքն էլ գրպանի ժամացույց չուներ, վոր նրանով ուղղել: Մի քիչ մտածելուց հետո, վազեց իր բարեկամի մոտ, իմացավ ժամանակը և անմիջապես նույն արագութեամբ վերադառնալով, ուղղեց իր պատի ժամացույցը: Իմացե՞ք՝ ինչպե՞ս կարողացավ նա ճիշտ կերպով ուղղել ժամացույցը:





«Ռաման-հարվածայինի № 3-ում սպված ուրուանների պատասխանները:  
 Ռերուս № 5. Նոր քափով լծվեմ ուսման:  
 Ռերուս № 6. — II հնգամյակին դիմավորել գիսու-  
 քյամբ գինված:



Отв. редактор  
 М. О. Пирумьян  
 Техн. редактор  
 Г. М. Маргарьян

2824  
 АУ-23

Сдано в наб. 28/X 1932 г.  
 Сдано в печ. 23.XI 1932 г.  
 Об'ем 5 печ. листа  
 Тираж 3000 экз.

Уполрайлита № 01853 Ростов и-Д. Газ.-ки. тип. СККПО Ст.-Форм А5 148 x210  
 Зап. № 5586

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ջան, ինչ առույզ իմ—Ոկոյարքիմ վարսյան	3
Հոկտեմբերյան հեղափոխությանը—Պ. Պետրոսյան	4
Պիոններ—Խաչատուր Դարուրի	11
Բաղաբացիական կռիվները մեր յերկրամասում—Յե. Զաֆարյան	12
Պերեկոպի գրավումը—Յե. Զ.	15
Հուշեր անցյալից — Խատիր	15
Դնակրի հիդրոկայանը—Շվարդ	19
Թվերը խոսում են—Մ. Փիրուսյան	23
Խորհրդային Հայաստան—Վ. Մովսյան	29
ՀեՄՀ—Հ. Մազմանյան	38
Սեվանի լիճը—Բիմոսկի	39
Մրրկի և նրա հողթանակի յերգը—Քարդ. Այծեմրկ	40
Հարվածային բրդաղբ—Բայլեր	44
Նոր թափով պայքարենք ուսման վորակի շամար—Յե. Զաֆարյան	47
ձագարի մասին—Աշոտ Լուսեց	50
Մանակցեք պիոներական վաշտերի և դպրոցների Համամիութենական մրցակցությանը—Մ. Փիրուսյան	52
Սպեկուլյանտ Միմոնը—Աշոտ Լուսեց	55
Մյասնիկյան առյուրը—Խիկար Դայան	56

Պոլիտեխնիկական բաժին

Շողեշարժ սուրբինները—Ս. Ադիմյան	63
Քեյամանում թաղնված ապստամբը Ս. Այգիեյան	66
Ինչպես պատրաստել տոնական լավտեր—Ո. Բառաշյան	69
«Մոնգոլիայի» խաղը—Ո. Բառաշյան	69
Գիտական փորձեր, խաղեր և զվարճալիքներ—Կազմեց. Ս. Շաֆարյան	71
Ուսման տեխնիկական խնդիրներ, խաղեր, հանելուկներ—Կազմեց. Սարսիգ	76
Կարմիր Հոկտեմբեր (յերգ)—յերածա. Յե. Սահառունի	78
Իմ աչքին (յերգ)—յերածա. Յե. Սահառունի	78

Ռերուսներ

Ռերուս № 7—Ս. Մեմրյան	79
Ռերուս № 8—Ս. Մեմրյան	79
Ռերուս № 9—Սարսիգ	80

Խմբագրական կոլեգյա Հ. Ավագյան, Յե. Զաֆարյան, Մ. Փիրուսյան  
 Պատասխանատու խմբագիր Մ. Փիրուսյան  
 Խմբագրության հասցեն՝  
 Ростов-Дон. Буденовский просп. № 30.  
 Изд-во „Северный Кавказ“. Армянская секция



# ЖУРНАЛ - УЧЕБНИК

для III и IV группы  
армянских школ I ст.

98 #1

Цена 00 коп.

К  
787

4717

мф  
807 D

807

ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



ИЗД-ВО «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»

ԴՐԱՊԵՆՍԵՐ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)